Ես գիտեմ, որ սուրբ գրությունները ճշմարիտ են

«Քանի որ հոգիս հրճվում է սուրբ գրություններով և սիրտս խորհում է դրանք»
(2 Նեփի 4.15):

Նկարներ կարող եք գտնել sharingtime.lds.org կայքում

Սուրբ գրություններ. *Հրավիրեք երեխաներին սովորել սուրբ գրքերից, ինչը կօգնի նրանց զարգացնել հարատև սեր Աստծո խոսքի հանդեպ: Ամեն շաբաթ ծրագրեք հրավիրել երեխաներին օգտագործելու և սովորելու սուրբ գրություններից: Որոշ երեխաներ, հնարավոր է, չունենան սուրբ գրություններ: Որոշ երեխաներ, հնարավոր , դեռևս չկարողանան կարդալ: Այս ծրագրի ուսուցողական խաղերը և ուսումնական խորհուրդները, որոնք տրված են էջեր 8, 13 և 24-ում, առաջարկում են մտքեր, թե ինչպես ուսուցանել օգտագործելով սուրբ գրությունները:*

Ցուցադրական նյութեր. *Այս գրքույկի ցուցադրական նյութերի ցուցակները կարող եք գտնել sharingtime.lds.org կայքում: Նաև փնտրեք ավետարանի որոշակի թեմաներին վերաբերող նյութեր Ընկեր-ում friend.lds.org կայքում: Այս միջոցները կարող են նաև տպվել և օգտագործվել երեխաներին ուսուցանելիս:*

Հրահանգներ Միացյալ ժամի և հաղորդության ժողովին երեխաների ելույթի համար

Սիրելի Երեխաների Խմբի նախագահություններ և երաժշտության ղեկավարներ,

Սուրբ գրությունները Աստծո խոսքն են: Եթե դուք աղոթքով կարդաք սուրբ գրությունները և կիրառեք դրանցում և այս ծրագրում ուսուցանվող սկզբունքները, դուք հոգեպես պատրաստ կլինեք սովորեցնելու Հիսուս Քրիստոսի ավետարանը ձեր Երեխաների Խմբի սաներին: Դուք նաև հնարավորություն կունենաք օգտագործել սուրբ գրությունները, օգնելով երեխաներին հասկանալ այս տարի ուսուցանվող ավետարանի սկզբունքները, որոնք են՝ Երկնային Հոր ծրագիրը, Հիսուս Քրիստոսի առաքելությունը, մարգարեների դերը, Եկեղեցու վերականգնումը և տաճարի օրհնությունները: Սուրբ գրությունները կօգնեն ձեզ հրավիրել Հոգին ձեր Երեխաների Խումբ և ստեղծել այնպիսի միջավայր, որտեղ երեխաները կարող են զգալ Սուրբ Հոգու ազդեցությունը: Այդ ազդեցությունը կօգնի Երեխաների Խմբի յուրաքանչյուր երեխայի ասել՝ «Ես գիտեմ, որ սուրբ գրությունները ճշմարիտ են»:

Շնորհակալություն ձեր հավատարիմ ծառայության համար: Մենք աղոթում ենք ձեր համար և վստահ ենք երեխաներին սիրելու ու Հիսուս Քրիստոսի ավետարանը նրանց սովորեցնելու ձեր ունակության վրա:

Երեխաների Խմբի Գերագույն Նախագահություն

Հրահանգներ Միացյալ Ժամի համար

Ավետարանի Ուսուցանում

Օգտագործեք այս գրքույկը, երբ պատրաստվում եք ամեն շաբաթ միացյալ ժամին 15-րոպե տևողությամբ դաս մատուցել: Դուք կարող եք ամենշաբաթյա դասերը համալրել Եկեղեցու կողմից հաստատված այլ նյութերով, ինչպիսիք են՝ *Ընկերը* կամ *Լիահոնան:* Հետևյալ ուղեցույցները կօգնեն ձեզ պլանավորել և մատուցել դասերը:

Միրեք նրանց, ում ուսուցանում եք: Երեխաների հանդեպ ձեր սերն արտահայտեք, սովորելով նրանց անունները և ծանոթանալով նրանց հետաքրքրություններին, տաղանդներին և կարիքներին:

Հոգով ուսուցանեք վարդապետությունը: Դասին պատրաստվելիս աղոթեք առաջնորդություն ստանալու համար և ձգտեք ամրապնդել ձեր վկայությունը այն սկզբունքների վերաբերյալ, որոնք ուսուցանելու եք: Դա կօգնի ձեզ Հոգով ուսուցանել:

Սովորելու կոչ արեք: Այս գրքույկը նախատեսված է օգնելու ձեզ իմանալ ոչ միայն *այն,* ինչ պետք է ուսուցանեք, այլև *ինչպես* պետք է ուսուցանել և ջանասիրաբար սովորելու կոչ անել: Դուք ավելի արդյունավետորեն կուսուցանեք վարդապետությունը, եթե ամեն դասին կատարեք հետևյալ երեք կետերը.

1. **Ներկայացրեք վարդապետությունը:** Պարզ ներկայացրեք վարդապետությունը, որն երեխաները պետք է սովորեն: Մտածեք, թե ինչպես կարող եք դա բանավոր և պատկերավոր ներկայացնել: (Օրինակների համար տես դասերը մարտի առաջին շաբաթվա համար և հուլիսի առաջին շաբաթվա համար:)
2. **Օգնեք հասկանալ:** Հավաստիացեք, որ երեխաները խորապես հասկանում են վարդապետությունը նրանց սովորելու գործընթացում, օգտագործելով ուսուցանման տարբեր եղանակներ, ինչպիսիք են՝ երգեր երգելը, դերակատարումները և սուրբ գրությունները կարդալը:
3. **Օգնեք կիրառել:** Երեխաներին հնարավորություն տվեք տանը կիրառել վարդապետությունը: Մտածեք, թե ինչպես նրանք կարող են արտահայտել տվյալ վարդապետության հետ կապված իրենց զգացումները կամ նպատակներ դնել:

Այս գրքույկը տրամադրում է լիարժեք դասեր տարվա որոշ շաբաթների համար: Մյուս շաբաթների համար տրվում են մտքեր, բայց ոչ լիարժեք դասեր: Այստեղ տրված մտքերին ավելացրեք ձեր մտքերը: Դուք կարող եք գաղափարներ քաղել այս գրքույկի այլ դասեր կարդալով: Եթե ամիսը հինգերորդ կիրակի ունի, այդ դասաժամը օգտագործեք նախորդ դասերը

վերանայելու համար: Հոգին կարող է ուղեկցել ձեզ, եթե դուք դասերի համար վարժություններ ծրագրեք և պատրաստեք:

Ձեր դասերին պատրաստվելիս աշխատեք երաժշտության ղեկավարի հետ: Երգերը կօգնեն ամրապնդել ուսուցանվող վարդապետությունները: Երբեմն դուք կարող եք հրավիրել ուսուցիչներին և իրենց դասարանները, որ օգնեն ձեզ ավետարանի որոշ մասեր ուսուցանելիս:

Որոշ դասեր առաջարկում են հրավիրել հյուր խոսնակների մասնակցելու Երեխաների Խմբի դասին: Նախքան այդ անձանց հրավիրելը , դուք պետք է ձեր եպիսկոպոսի կամ ճյուղի նախագահի համաձայնությունը ստանաք:

Դասերի հետ տրված են մի քանի ուսուցողական խորհուրդներ, որոնք կօգնեն բարելավել ձեր ուսուցման ունակությունը: Դասերը նաև ընդգրկում են նկարներ, որոնք կօգնեն ձեզ ընկալել, թե ինչպիսին է վարժությունը: Թեպետ ուսուցանելու ունակությունները կարևոր են, ձեր հոգևոր պատրաստվածությունը և վկայությունը կիրավիրեն Հոգին՝ հաստատելու այդ վարդապետությունները երեխաների սրտում:

Երգեցողության ժամ

Երեխաների Խմբում երաժշտությունը պետք է ստեղծի ակնածալի մթնոլորտ, ուսուցանի ավետարանը և օգնի երեխաներին զգալ Սուրբ Հոգու ազդեցությունը և երգից բխող ուրախությունը: Միացյալ ժամի 20 րոպեն պետք է նվիրվի երգելուն ու երաժշտությունն ուսուցանելուն: Այսպիսով դուք բավականին ժամանակ կունենաք նոր երգ սովորեցնելու և օգնելու երեխաներին հաճույքով երգել:

Այս գրքույկում զետեղված է նոր երգ, որը երեխաները պետք է սովորեն այս տարի (տես էջ 28). Այն նաև պարունակում է «Ինչպես օգտագործել երգը Երեխաների Խմբում» (տես էջեր 26-27) և լրացուցիչ մտքեր երեխաներին երգեր սովորեցնելու վերաբերյալ (տես էջ 7):

Նախապատրաստություն. *Միացյալ ժամին պատրաստվելիս աղոթեք առաջնորդության համար և փնտրեք Հոգու ազդեցությունը: Եթե Հոգով պատրաստվեք և ուսուցանեք, Նա կհաստատի այն ամենի ճշմարտացիությունը, ինչ ուսուցանում եք: (Տես* ՈՒՉԱՄԿ, *13:)*

Ուղեցույցներ հաղորդության ժողովի ելույթի համար

Եպիսկոպոսի կամ ճյուղի նախագահի ղեկավարության ներքո, հաղորդության ժողովին երեխաների ելույթն անց է կացվում տարվա չորրորդ եռամսյակին: Տարվա սկզբին, նախօրոք ծրագրերը քննարկելու նպատակով, հանդիպեք եպիսկոպոսության կամ ճյուղի նախագահության խորհրդականի հետ, որը պատասխանատու է Երեխաների Խմբի համար: Երբ ծրագրերը վերջնական կլինեն, ստացեք նրա հավանությունը:

Ծրագրեք այնպես, որ երեխաները ներկայացնեն ծրագիրը միացյալ ժամի ամսական թեմաների հիման վրա: Տարվա ընթացքում գրի առեք երեխաների առանձին ելույթները և փորձառությունները՝ հնարավորության դեպքում հաղորդության ելույթի ժամանակ օգտագործելու համար: Երբ ծրագրում եք, որ երեխաները կիսվեն այս տարվա թեմայի մասին իրենց սովորածով, մտածեք, թե ինչպես կարող են նրանք օգնել ներկաներին կենտրոնանալ ավետարանի այն վարդապետությունների վրա, որ իրենք են ուսուցանում: Նախագահության անդամներից մեկը կարող է ավարտել ժողովը ելույթի մասին կարճ ակնարկով:

Ելույթին նախապատրաստվելիս հիշեք հետևյալ ուղեցույցները.

- Փորձերը դասերից կամ ընտանիքներից անտեղի ժամանակ չպետք է խլեն:
- Հաղորդության ժողովին պատշաճ չէ օգտագործել ցուցադրական նյութեր, հատուկ հագուստներ և տեսանյութեր:

Ծրագրում ընդգրկված երգերը կարող են կատարվել մեծ կամ փոքր խմբերով, մենակի կամ զուգերգի ձևով, կամ լարային գործիքի նվագակցությամբ: Համոզվեք, որ երեխաները լավ գիտեն բառերը և կարող են անգիր երգել:

Այս գրքույկում օգտագործված աղբյուրներ

Այս գրքույկում օգտագործվել են հետևյալ նշաններն ու հապավումները.

(*CS,* *Children's Songbook*

ՈՒՉԱՄԿ *Ուսուցում՝ չկա ավելի մեծ կոչում*

Շատ դասեր ներառում են առաջարկություններ նկարները օգտագործելու վերաբերյալ: Դուք կարող եք նկարներ գտնել *Gospel Art Book*-ում, Ավետարանի նկարների ժողովածուում, Երեխաների դասագրքի նկարների հավաքածուում, Եկեղեցու ամսագրերում և *images.lds.org* կայքում:

2011թ. Ուսումնական Ծրագիր

Ընդհանուր Ծրագիր

Մանկամսուր.*Նայեք ձեր փոքրիկներին,* Արևաշող. *Երեխաների Խումբ 1,* Ըճ 4–7. *Երեխաների Խումբ 3,* Քաջարի 8–11. *Երեխաների Խումբ 7*

Հիմնական Ծրագիր

Արևաշող. *Երեխաների Խումբ 1,* Ըճ 4–7. *Երեխաների Խումբ 3.* Քաջարի 8–11. *Երեխաների Խումբ 7*

Նյութեր. *Դուք կարող եք գտնել ուսուցանման այնպիսի լրացուցիչ նյութեր, ինչպիսիք են գունավորման էջերը, պատմությունները,* Friend-ի, Լիահոնա-ի *մանկամսուրի դասագրքերի վարժությունները, և* Gospel Art Book-*ը: Օգտագործեք այդ աղբյուրները որպես հավելում ձեր դասերին:*

Հունվար

Երգ. «Եթե սրտով եմ լսում»
(այս ծրագրի 28-րդ էջում)

Կոչ՝տարվա համար. *Ամբողջ տարվա ընթացքում երեխաներին հնարավորություններ տվեք կիսվելու, թե ինչ են նրանք սովորել իրենց սուրբ գրությունները կարդալիս: Սա երեխաներին իրենց փորձառություններով կիսվելու հնարավորություն կտա և կօգնի դրդել մյուսներին տանը կարդալ իրենց սուրբ գրությունները :*

Սուրբ գրությունները Աստծո խոսքն են

«Սնվե՛ք Քրիստոսի խոսքերով. Քանզի ահա, Քրիստոսի խոսքերը կասեն ձեզ բոլոր բաները, որ դուք պետք է անեք» (2 Նեփի 32.3):

Այստեղ տրված մտքերին ավելացրեք ձեր մտքերը: Պլանավորեք, թե ինչպես կարող եք երեխաներին ներկայացնել վարդապետությունը և օգնել նրանց հասկանալ և կիրառել այն իրենց կյանքում: Հարցրեք ինքներդ ձեզ. «Ի՞նչ պետք է անեն երեխաները, որպեսզի սովորեն, և ինչպե՞ս կարող եմ ես օգնել նրանց զգալ Հոգին»:

Շաբաթ 1. Սուրբ գրությունները Աստծո խոսքն են:

Ներկայացրեք վարդապետությունը *(գրքերին նայելով).* Երեխաների Խումբ բերեք բազմազան գրքեր (ինչպես օրինակ խոհարարական գիրք, պատմվածքների գիրք, դպրոցական դասագրքեր), և հրավիրեք մի քանի երեխայի ցուցադրել այս գրքերն ու սուրբ գրությունները Երեխաների Խմբին: Հրավիրեք երեխաներին քննարկել գրքերի միջև նմանություններն ու տարբերությունները՝ ներառյալ դրանց հեղինակներին: Նշեք, որ սուրբ գրությունները առանձնահատուկ են, որովհետև դրանք գրվել են Աստծո մարգարեների կողմից և Աստծո խոսքն են:

Օգնեք հասկանալ *(համընկումների խաղ խաղալով).* Ասացեք երեխաներին, որ կան սուրբ գրությունների չորս գրքեր, որոնք մենք օգտագործում ենք Եկեղեցում. Աստվածաշունչը, Մորմոնի Գիրքը, Վարդապետություն և Ուխտերը և Թանկագին Մարգարիտը: Բացատրեք, որ մենք դրանց անվանում ենք «հիմնական աշխատություններ»: Երեխաներին սովորեցրեք յուրաքանչյուր գրքի մասին: Ներառեք յուրաքանչյուր գրքում գտնվող պատմություններից կամ ուսմունքներից մի քանիսը: Խաղացեք համընկումների խաղ (տես *ՈՒՉԱՄԿ,* 169) հիմնական աշխատությունների անուններով և յուրաքանչյուր գրքում գտնվող պատմություն կամ ուսմունք ներկայացնող նկարներով:

Օգնեք կիրառել *(կիսվել սուրբ գրությամբ).* Հրավիրեք երեխաներից մի քանիսին կիսվել սուրբ գրություններից իրենց սիրած հատվածով կամ պատմությամբ: Խրախուսեք նրանց կիսվել նրանով, ինչ նրանք սովորել են սուրբ գրություններն ընթերցելիս: Բերեք ձեր վկայությունը սուրբ գրությունների վերաբերյալ:

Շաբաթ 2. Մենք պետք է սնվենք Քրիստոսի խոսքերով:

Օգնեք հասկանալ և կիրառել *(սովորել բառեր և արտահայտություններ).* Բացատրեք, որ Տերն օգտագործում է գործնական բառեր՝ նկարագրելով, թե մենք ինչպես պետք է ուսումնասիրենք սուրբ գրությունները: Հետևյալ բառերն ու արտահայտությունները փաքցրեք սենյակի տարբեր մասերում. *սնվել* (տես 2 Նեփի 32.3), *զանձել* (տես ՎԱՈՒ 84.85), *ջանասիրաբար քննել* (տես Մոսիա 1.7), *ամուր բռնել* (տես 1 Նեփի 15.24): Ծրագրեք ստեղծագործ եղանակներ՝ այս գաղափարները երեխաներին ներկայացնելու և բացատրելու համար: Օրինակ, դուք կարող եք հրավիրել երեխաներին ցուցադրել տարբերությունը ուտելիքը կծմծելու և ուտելիքով սնվելու միջև և այնուհետև քննարկել, թե ինչպես է սա վերաբերվում սուրբ գրությունների ուսումնասիրությանը: Դուք կարող եք նաև հարցնել երեխաներին, թե ինչու նրանք պետք է «ամուր բռնեն» իրենց ծնողների ձեռքից մարդաշատ շուկայում, և այնուհետև բացատրեք, թե ինչպես նրանք կարող են ամուր բռնել սուրբ գրություններից և ինչու է դա նույնքան կարևոր, որքան իրենց ծնողների ձեռքից ամուր բռնելը:

Օգնեք կիրառել *(կարդալ սուրբ գրությունները).* Հրավիրեք երեխաներին և ուսուցիչներին սուրբ գրությունները կանոնավոր

Այս շղթան կարող է դառնալ աճի տեսանելի հիշեցում, որը գալիս է սուրբ գրությունները կարդալու հետևանքում:

ուսումնասիրելու սովորություն ձեռք բերել: Բացատրեք, որ ամեն շաբաթ այն երեխաները, ովքեր կարդացել կամ լսել են սուրբ գրություններից, հնարավորություն կունենան գրել իրենց անունները թղթի վրա և կցել այն թղթե շղթային: Ասացեք նրանց, որ երբ շղթան մեծանա, սուրբ գրությունների նրանց գիտելիքները նմանապես կմեծանան: Խորհուրդ տվեք շղթան պահել «գանձերի» տուփում (այս տուփը կարող է նաև օգտագործվել, երբ սովորեցնում եք, թե ինչ է նշանակում «գանձեք» վերևի վարժությունում): Քաջալերեք երեխաներին կիսվել սուրբ գրություններն ուսումնասիրելու նրանց նպատակով իրենց ընտանիքների հետ:

Շաբաթ 3. Քրիստոսի խոսքերը կասեն մեզ բոլոր բաները, որ պետք է անենք:

Օգնեք հասկանալ *(տեսնել առարկայական դաս).* Կապեք երեխաներից մեկի աչքերը: Թող մեկ ուրիշ երեխա բռնի Հիսուս Քրիստոսի նկարը Երեխաների Խմբի սենյակի որևէ մասում: Թող աչքերը կապած երեխան փորձի գտնել նկարը՝ առանց որևէ օգնության: Կրկնեք վարժությունը, բայց այս անգամ խնդրեք երկու երեխաների բռնել ձող, պարան կամ լար՝ ներկայացնելով երկաթյա ձողը, որը կառաջնորդի աչքերը կապած երեխային դեպի Քրիստոսի նկարը: Թող երեխան պարանի օգնությամբ հասնի նկարին: Հարցրեք.«Ինչո՞վ է պարանից բռնելը նման սուրբ գրությունները կարդալուն»: (Տես 1 Նեփի 15.23-25:) Երեխաների երգչախմբին սովորեցրեք «Երկաթյա ձողը»(*Հիմներ,* համար 274): Կիսվեք մի քանի օրինակներով ձեր կյանքից, երբ սուրբ գրությունները սովորեցրել են ձեզ, թե ինչ պետք է անեք: Բացատրեք, թե ինչպես են սուրբ գրությունների ուսմունքները օգնել ձեզ ավելի մոտենալ Փրկչին:

Առարկայական դասերը օգնում են երեխաներին հասկանալ գաղափարները պարզ ու ծանոթ եղանակով (տես ՈՒՉԱՄԿ, 164):

Շաբաթ 4. Ես կարող եմ իմանալ, որ սուրբ գրությունները ճշմարիտ են:

Օգնեք հասկանալ *(երգ երգել).* Բերեք մեկ կամ ավելի առարկաներ, որ երեխաները կարողանան սովորել իրենց հինգ զգայարաններից ոմանք գործածելու մասին: Օրինակ, դուք կարող եք բերել միրգ կամ ծաղիկ, կամ դուք կարող եք երաժշտություն նվագել: Մի քանի երեխայի հնարավորություն տվեք տեսնել, հոտ քաշել, շոշափել, համտեսել կամ լսել այն ,ինչ բերել էիք: (Կատարեք այս վարժությունը փոքր խմբերով, որպեսզի յուրաքանչյուր երեխա մասնակցելու հնարավորություն ունենա): Ցույց տվեք, որ մենք կարող ենք նաև տեսնել, շոշափել, հոտ քաշել և լսել սուրբ գրությունները, բայց դրանց մասին վկայություն ձեռք բերելու համար մենք պետք է վկայություն ստանանք Հոգու միջոցով: Հրավիրեք երեխաներին երգել «Փնտրել, խորհել և աղոթել» երգը (*ՀՏ,* 109): Երգելիս, խնդրեք նրանց լսել, թե ինչ երեք բան մենք կարող ենք անել՝ հրավիրելով Հոգուն վկայել, որ սուրբ գրությունները ճիշտ են: Հրավիրեք երեխաներին ձեռքի շարժումներով նկարագրել *փնտրել, խորհել* և *աղոթել բառերը:* Կրկնեք երգը՝ այս բառերի փոխարեն ցուցադրելով ձեռքի շարժումները:

Օգնեք կիրառել *(կիսվել զգացմունքներով).* Ցուցադրեք Մորոնիի նկարը և կարդացեք Մորոնի 10.4-5: Հրավիրեք մի քանի երեխաների կիսվել իրենց զգացմունքներով սուրբ գրությունների վերաբերյալ: Նրանք կարող են նաև կիսվել նրանով, ինչ անում են տանը սուրբ գրությունները կարդալու համար: (Մի քանի երեխաների նախօրոք խնդրեք, որպեսզի նախապատրաստվելու ժամանակ ունենան): Քաջալերեք երեխաներին, որ տանը իրենց ծնողների հետ կիսվեն վկայությամբ սուրբ գրությունների մասին:

Ներգրավել բոլոր երեխաներին. *Մտածեք, թե ինչպես կարող եք օգնել ձեր Երեխաների Խմբի բոլոր երեխաներին հաջողություն ունենալ ամբողջ տարվա ընթացքում իրենց սուրբ գրությունները կարդալիս: Օրինակ, այն երեխաներին, որոնց տանը չեն աջակցում, կարող եք եկեղեցում կարդալու հնարավորություններ տալ և այնուհետև ավելացնել նրանց անունները թղթե շղթայում:*

Փոքր խմբեր. *Փոքր խմբերով մասնակցելը ավելի շատ երեխաների է հնարավորություն տալիս մասնակցելու (տես ՈՒՉԱՄԿ, 161): Երեխաները դասին արդեն իսկ խմբերով են նստած: Այդ խմբերը հարմար են փոքր խմբային վարժությունների համար: Դասարանի ուսուցիչները կարող են օգնել, որպեսզի երեխաները մասնակցեն և օգնեն պահպանել ակնածանքը:*

Փետրվար

Երգ. «Ես կիետևեմ Աստծո ծրագրին»
(*CS*,164–65)

Ամրապնդել ընկալումը. *Երբ երեխաները կիսվում են Երեխաների Խմբում իրենց սովորածով, ամրապնդվում է վարդապետության իրենց ընկալումն ու վկայությունը: Մտածեք, թե ինչպես կարող եք նրանց հնարավորություն տալ սա դասարանում անել և խրախուսեք նրանց տանը կիսվել իրենց սովորածով:*

Վկայություն. *Դասի ցանկացած պահին հակիրճ վկայությունը կարող է հրավիրել Հոգին: Դա կարող է այնքան պարզ լինել, որքան «Ես գիտեմ, որ Երկնային Հոր ծրագիրը մեզ երջանկություն կբերի» ասելը, կամ դա կարող է լինել ավելի պաշտոնական վկայություն, որը պարունակում է հետևյալ լեզուն՝ «Ես ուզում եմ բերել իմ վկայությունը»: (Տես* ՈՒՉԱՄԿ, *43-44):*

Սուրբ գրությունները սովորեցնում են Երկնային Հոր ծրագիրը

«Քանզի ահա, սա է իմ գործը և իմ փառքը՝ իրականացնել մարդու անմահությունն ու հավերժական կյանքը» (Մովսես 1.39):

Այստեղ տրված մտքերին ավելացրեք ձեր մտքերը: Պլանավորեք, թե ինչպես կարող եք երեխաներին ներկայացնել վարդապետությունը և օգնել նրանց հասկանալ և կիրառել այն իրենց կյանքում: Հարցրեք ինքներդ ձեզ. «Ի՞նչ պետք է անեն երեխաները, որպեսզի սովորեն, և ինչպե՞ս կարող եմ ես օգնել նրանց զգալ Հոգին»:

Շաբաթ 1. Երկնային Հայրը ծրագիր ունի մեզ համար:

Ներկայացրեք վարդապետությունը. Երեխաներին ցույց տվեք մի տան նկար: Բացատրեք, որ շինարարները մինչև տուն կառուցելը պետք է տան կառուցման ծրագիր ունենան: Հարցրեք. «Ինչու՞ է կարևոր ծրագրեր կազմելն ու դրանց հետևելը»: Վերցրեք սուրբ գրությունները և ասացեք երեխաներին, որ սուրբ գրություններում մենք կարող ենք գտնել Երկնային Հոր ծրագիրը մեզ համար: Գրատախտակին գրեք՝ «Երկնային Հայրը ծրագիր ունի մեզ համար»: Միասին կարդացեք նախադասությունը:

Օգնեք հասկանալ *(երգեր երգել).* Գրատախտակին գրեք հետևյալ նախադասությունները.

- Ո՞վ եմ ես:
- Որտեղի՞ց եմ ես եկել:
- Ինչու՞ եմ ես այստեղ:
- Ի՞նչ կպատահի ինձ հետ իմ մահից հետո:

Երեխաներից յուրաքանչյուրին տվեք մի թերթիկ, որի վրա գրված կլինի հետևյալ բառերից մեկը՝ *ով, որտեղ, ինչու* կամ *ինչ:* Միասին կարդացեք գրատախտակի առաջին նախադասությունը և ասացեք, որ բոլոր այն երեխաները, ովքեր ունեն *ով* բառը, կանգնեն: Երգեք «Զավակն եմ ես Աստծո» (*CS,* 2–3), և հարցրեք կանգնած երեխաներին, թե ինչպես նրանք կպատասխանեն հարցին: Կրկնեք յուրաքանչյուր հարցի հետ, օգտագործելով հետևյալ երգերը. որտեղ՝ «Ես ապրել եմ երկնքում» (*CS,* 4); ինչու՝ «Ես կիետևեմ Աստծո ծրագրին» (*CS,* 164–65); ինչ՝ «Իրո՞ք Քրիստոսը կրկին ապրեց»: (*CS,* 105): Վկայեք, որ Երկնային Հոր ծրագիրը մեզ երջանկություն կբերի:

Շաբաթ 2. Հիսուս Քրիստոսը ստեղծեց երկիրն ինձ համար:

Օգնեք հասկանալ *(նկարներ նկարել).* Մտքեր տվեք երեխաներին այնպիսի բաների վերաբերյալ, որոնք կապված են կարգուկանոնի հետ, ինչպես օրինակ՝ կոշիկները կապելը կամ քնելուն նախապատրաստվելը:

Բացատրեք, որ սուրբ գրություններից մենք սովորում ենք, որ Հիսուսը ստեղծեց երկիրը որոշակի կարգով: Երեխաներին բաժանեք վեց խմբի և յուրաքանչյուր խմբին տվեք Արարման մեկ օրը նկարագրող հոդում սուրբ գրություններից (տես Մովսես 2): Խնդրեք յուրաքանչյուր խմբին իրենց օրը պատկերող նկարներ նկարել: Թող նրանք ցույց տան իրենց նկարները մյուս երեխաներին և ասեն նրանց, թե ինչ է արարվել այդ օրը: Հրավիրեք երեխաներին նկարները ճիշտ կարգով տեղադրել գրատախտակի վրա:

Օգնեք կիրառել *(խաղալ խմորով կամ նկարներով).* Հարցրեք երեխաներին՝ «Քրիստոսի արարումներից ո՞րն է կարևոր ձեր համար»: Յուրաքանչյուր երեխայի տվեք մի քիչ աղի խմոր (տես *ՈՒՉԱՄԿ,* 165, աղի խմորի բաղադրության համար): Թող երեխաները օգտվեն խմորից իրենց համար կարևոր արարչությունը պատրաստելիս: (Եթե աղի խմոր չունեք, դրա փոխարեն երեխաները կարող են նկարել): Թող երեխաները կիսվեն իրենց դասարանի խմբերի հետ նրանով, ինչ պատրաստել են կամ նկարել և թե ինչու դա կարևոր իրենց համար: Երգեք «Իմ Երկնային Հայրը սիրում է ինձ» (*CS,* 228–29):

Շաբաթ 3. Ընտանիքները առանցքային են Երկնային Հոր Ծրագրում:

Ներկայացրեք վարդապետությունը *(անգիր սովորել).* Գրատախտակին գրեք հետևյալը. «Ընտանիքները առանցքային են Երկնային Հոր ծրագրում»: Քննարկեք, թե ինչ է նշանակում այս նախադասությունը: Նախադասությունը ջնջեք: Ասեք առաջին երկու բառերը,և խնդրեք երեխաներին կրկնել դրանք: Այնուհետև ասեք առաջին չորս բառերը, և խնդրեք երեխաներին կրկնել դրանք: Շարունակեք մինչև երեխաները կարողանան կրկնել ամբողջ նախադասությունը:

Օգնեք հասկանալ *(հարցեր տալ և հարցերին պատասխանել).* Մի քանի երեխաների նախօրոք խնդրեք ներկայացնել ընտանիքներ սուրբ գրություններից: Յուրաքանչյուր ընտանիքի վերաբերյալ հուշումներ նախատեսեք (օրինակ, Ադամ ու Եվա՝ «Մեր ընտանիքը աշխարհում առաջին ընտանիքն էր»; Աբրահամ ու Սարա՝ «Մենք շատ ծեր էինք, երբ երեխա ունեցանք»; Լեքի ու Սարիա՝ «Խոստացված երկիր հասնելու համար մենք անցանք օվկիանոսի վրայով»), և հուշումները տվեք երեխաներին: Եթե հնարավոր է, տրամադրեք պարզ թաթերական հագուստներ: Խնդրեք այն երեխաներին, ովքեր սուրբ գրություններից ընտանիքներ են ներկայացնում, հերթով խմբով առաջ գալ: Թող նրանք կարդան իրենց հուշումները և Երեխաների Խմբի մյուս երեխաները գուշակեն, թե ում են նրանք ներկայացնում: Յուրաքանչյուր ընտանիքը բացահայտելուց հետո, ցույց տվեք երեխաներին, թե սուրբ գրություններում որտեղ նրանք կարող են սովորել այս ընտանիքի մասին: Երեխաներին պատմեք, թե ինչպես էր ընտանիքներից յուրաքանչյուրը հետևում իրենց համար նախատեսված Երկնային Հոր ծրագրին:

Օգնեք կիրառել *(քննարկել ընտանիքները).* Խնդրեք երեխաներին մտածել իրենց ընտանիքների լավ հատկանիշների մասին: Հրավիրեք նրանց կիսվել այդ հատկանիշներով խմբում միմյանց հետ կամ ամբողջ Երեխաների Խմբի հետ:

Վարժությունները հարմարեցրեք *ձեր Երեխաների Խմբի երեխաների տարիքին (տես ՈՒՉԱՄԿ, 110-17): Օրինակ, 3-րդ շաբաթվա երկրորդ վարժությունում ավելի մեծ երեխաները կարող են խմբերին տալ այո կամ ոչ պատասխան պահանջող հարցեր՝ սուրբ գրություններից նրանց ներկայացրած ընտանիքների մասին ակնարկների փոխարեն:*

Շաբաթ 4. Ես կհետևեմ Աստծո Ծրագրին:

Օգնեք հասկանալ *(տեսնել առարկայական դաս).* Ցույց տվեք մի քանի լոբու հատիկ կամ փոքր քարեր և դատարկ ապակե տարա՝ ժպտացող դեմքով պիտակով: Ասեք երեխաներին, որ Երկնային Հոր ծրագիրը մեզ ազատություն է տալիս՝ ընտրելու ճիշտը կամ սխալը: Բացատրեք, որ լավ ընտրությունները տանում են դեպի ազատություն և երջանկություն, մինչդեռ վատ ընտրությունները տանում են դեպի գերություն և դժբախտություն (տես 2 Նեփի 2.27): Հարցրեք երեխաներին. «Հետևելով Աստծո ծրագրին ի՞նչ պատվիրաններ եք պահում»: Հարցին պատասխանող յուրաքանչյուր երեխայի տվեք մեկական լոբի: Պատասխանները գրեք գրատախտակին: Լոբու հատիկ ունեցող յուրաքանչյուր երեխայի խնդրեք պատմել, թե իրենց նշած պատվիրանը պահելը ինչպես կտանի դեպի երջանկություն: Այնուհետև երեխան թող իր լոբին գցի տարայի մեջ: Վկայեք, որ մենք մեր կյանքը կլցնենք ուրախությամբ, եթե ընտրենք հետևել Աստծո ծրագրին:

Օգնեք կիրառել *(ցուցապատառներ պատրաստել).* Յուրաքանչյուր դասի համար պատրաստեք ցուցապաստառի ձև ունեցող մի մեծ թղթի կտոր: Յուրաքանչյուր ցուցապաստառի վրա գրեք «Ես կհետևեմ Աստծո ծրագրին . . .»: Բացատրեք, որ Երկնային Հոր ծրագիրը մեզ ազատություն է տալիս ընտրելու ճիշտը կամ սխալը, և այն, ինչ մենք կընտրենք անել ամեն օր, կարևոր է մեր երջանկության համար: Թող երեխաները խմբով աշխատեն և իրենց ցուցապաստառի վրա նկարեն կամ գրեն բաներ, որ կարող են անել Աստծո ծրագրին հետևելու համար, և հրավիրեք նրանց գրել իրենց անունները: Յուրաքանչյուր խումբ թող կիսվի իր նկարածով կամ ցուցապաստառի վրա գրածով: Թող երեխաները բռնեն իրենց ցուցապաստառները և երգեն «Ես քաջ կլինեմ» (*CS,* 162) երգը՝ երթ կազմակերպելով սենյակում: Յուցադրեք ցուցապաստառները Երեխաների Խմբի սենյակում:

Սեղմեք այստեղ երջանիկ դեմքի համար

Սեղմեք այստեղ ցուցապաստառի համար:

Երեխաների եռանդը կենտրոնացրեք համապատասխան շարժումների վրա՝ ապահովելով նրանց ակտիվ մասնակցություն:

Մարտ

Երկնային Հայրը խոսում է մեզ հետ Իր մարգարեների միջոցով

Երգ. «Պաշտպանել ճշմարտությունը»
(*CS*, 159)

«Ինչ որ ես՝ Տերս, ասել եմ, ես եմ ասել, . . . լինի դա իմ իսկ ձայնով, թե իմ ծառաների ձայնով՝ միևնույն է» (ՎԵՈՒ 1.38):

Այստեղ տրված մտքերին ավելացրեք ձեր մտքերը: Պլանավորեք, թե ինչպես կարող եք երեխաներին ներկայացնել վարդապետությունը և օգնել նրանց հասկանալ և կիրառել այն իրենց կյանքում: Հարցրեք ինքներդ ձեզ. «Ի՞նչ պետք է անեն երեխաները, որպեսզի սովորեն, և ինչպե՞ս կարող եմ ես օգնել նրանց զգալ Հոգին»:

Ակնածանք. *Ամենի հավանական է, որ երեխաները ակնածալից լինեն, երբ նրանք ներգրավված լինեն սովորելու ընթացքի մեջ: Առաջին և երկրորդ շաբաթվա վարժությունները շատ երեխաներ են ներգրավում: Նրանք, ովքեր չեն մասնակցում բեմականացմանը, զբաղված կլինեն այն դիտելով: (Տես* ՈՒՉԱՄԿ, *82-83):*

Շաբաթներ 1 և 2. Մարգարեները խոսում են Երկնային Հոր անունից:

Ներկայացրեք վարդապետությունը *(դիտել բեմականացում).* Հրավիրեք երեխաներից մեկին առաջ գալ: Ասեք մյուս երեխաներին հետևել նրա հրահանգներին: Երեխային շշնջացեք պարզ հրահանգներ, ինչպես օրինակ՝ «Ասա նրանց, որ դնեն իրենց ձեռքերը իրենց գլխին» կամ «Ասա նրանց, որ ցածր ձայնով ողջունեն իրենց կողքինին»: Կրկնեք, մի քանի այլ պարզ հրահանգներ տալով, ավարտելով «Ասա նրանց, որ ծալեն իրենց ձեռքերը» հրահանգով: Հարցրեք երեխաներին՝ ինչպես նրանք իմացան, թե ինչ էիք դուք ուզում,որ իրենք անեն: Բացատրեք, որ ճանապարհներից մեկը, որով Երկնային Հայրը և Հիսուս Քրիստոսը ուղերձներ են ուղարկում աշխարհի մարդկանց, դա Իրենց ծառաների հետ խոսելն է և այնուհետև պատվիրելը, որ այդ ծառաները խոսեն ժողովրդի հետ: Հարցրեք. «Ովքե՞ր են այն ծառաները, որոնք խոսում են Երկնային Հոր ու Հիսուսի անունից»: Թող երեխաները միասին ասեն. «Մարգարեները խոսում են Երկնային Հոր անունից»:

Օգնեք հասկանալ *(բեմադրել պատմություններ սուրբ գրություններից).* Մինչև Երեխաների Խմբի դասի սկսվելը մի քանի աթոռների տակ ամրացրեք մարգարեի նկար և սուրբ գրություններից որոշ հղումներ, որ պատմում են նրա արածների կամ ասածների մասին: Օրինակները կարող են ընդգրկել Նոյին Ծննդոց Զ.13-14,Է.5, 7-10), Մովսեսին (Ելից ԺԴ.8-9, 13-14, 21-22), Սամուել Լամանացուն (Հելաման 14.1-8,16.1-3), և Ջոզեֆ Սմիթին (ՎԵՈՒ 89): Երեխաներին հրավիրեք նայել իրենց աթոռների տակ՝ նկարները գտնելու համար: Երեխաներին բաժանեք խմբերի, յուրաքանչյուր խմբում՝ մեկական նկար, և թող նրանք պատրաստեն ու ներկայացնեն բեմադրություն՝ իրենց մարգարեի վերաբերյալ: Հրավիրեք մյուս խմբերին գուշակել, թե որ մարգարեին են ներկայացնում: Քննարկեք,թե ինչպես են մարդիկ ստացել մարգարեի ուղերձը և ինչպիսին է եղել արդյունքը:

Օգնեք հասկանալ *(երգ երգել).* Պատրաստեք «Մարգարեների անիվ», ինչպիսին ցուցադրված է այստեղ: Բաժանեք շրջանը ութ մասի՝ յուրաքանչյուրը «Հետևիր մարգարեին» (*CS,* 110–11) երգից մարգարեի անունով: Հրավիրեք մի երեխայի անիվը պտտելու: Կիսվեք համառոտ պատմությամբ անիվի վրա նշված մարգարեի մասին (մտքերի համար օգտվեք *CS,* 111-ի հղումներից): Այնուհետև «Հետևեք մարգարեին» երգից երգեք այդ մարգարեի մասին տողը: Հրավիրեք մեկ ուրիշ երեխայի պտտելու անիվը, և կրկնեք վարժությունը՝ որքան որ ժամանակը թույլ կտա:

Սեղմեք այստեղ Մարգարեների Անիվի համար

Շաբաթ 3. Այսօր մենք առաջնորդվում ենք ապրող մարգարեի կողմից:

Օգնեք հասկանալ *(քննարկել մարգարեների ուսմունքները).* Թղթի կտորը բաժանեք չորս մասի և դրեք դրանք այսօրվա մարգարեի նկարի վրա: Թղթի յուրաքանչյուր կտորի հետևում գրեք մարգարեի ուսմունքներից մեկը: (Տեղեկություններ քաղեք *Ensign* կամ *Լիահոնա* համաժողովի համարից, սովորելու համար, թե ինչի մասին է վերջերս մարգարեն խոսել):

Հրավիրեք մի երեխայի վերցնել թղթի կտորներից մեկը և բեմադրել ուսմունքը: Թող մյուս երեխաները կռահեն, թե ինչ է նա ցույց տալիս: Կրկնեք նույնը մյուս ուսմունքների հետ: Ցույց տվեք որևէ *Ընկեր* կամ *Լիահոնա* և բացատրեք, որ մենք այսօր կարող ենք կարդալ մարգարեի խոսքերը:

Օգնեք կիրառել *(կիսվել մտքերով).* Թող երեխաներից մեկը կանգնի ու լրացնի այս նախադասությունը. «Ես կհետևեմ ապրող մարգարեին . . . »: Հրավիրեք մեկ ուրիշ երեխայի կրկնել առաջին երեխայի ասածը՝ ավելացնելով մարգարեին հետևելու մեկ այլ ճանապարհ: Շարունակեք՝ որքան որ ժամանակը թույլ կտա, օգնելով երեխաներին կրկնել ուրիշ երեխաների ասածները որքան հնարավոր է շատ:

Շաբաթ 4. Մարգարեին հետևելը ապահովություն է բերում:

Օգնեք հասկանալ *(երգ երգել և պատմություններ լսել).* Պատրաստեք սովորական ճանապարհային նշաններ, որոնց վրա գրված է «Կանգնել», «Դանդաղ» և «Գնալ»: Նշանները պահելու համար երեք երեխա ընտրեք, և ասեք նրանց բարձրացնել նշանները, երբ երաժշտության ղեկավարը ամրացնի դրանք ուսին: Ասեք երեխաներին, որ Գնալ նշանը նշանակում է սկսել երգել. Կանգնել նշանը նշանակում է դադարել երգել և Դանդաղ նշանը նշանակում է դանդաղ երգել: Թող երաժշտության ղեկավարը առաջնորդի երեխաներին երգել «Պաշտպանել ճշմարտությունը» (*ՀՏ,* 159) երգը:

Բացատրեք, որ ճանապարհային նշանները մեզ ապահով են պահում և նախօրոք զգուշացնում են վտանգի մասին: Այնուհետև բացատրեք, որ մարգարեների հրահանգները նման են այս ճանապարհային նշաններին, որովհետև Երկնային Հայրը պաշտպանում և օրհնում է մեզ, երբ մենք հետևում ենք դրանց: Երեխաներին երեք խմբի բաժանեք:

Յուրաքանչյուր խմբի ղեկավարը կամ ավագ երեխաներից մեկը թող կիսվի մի համառոտ պատմությամբ այն ժամանակների մասին, երբ նա (կամ սուրբ գրություններից ինչ-որ մեկը) պաշտպանվել է, երբ հետևել է մարգարեին: Այնուհետև թող խմբերը տեղափոխվեն մեկ ուրիշ ղեկավարի մոտ մեկ այլ պատմություն լսելու համար: Հրավիրեք երեխաներին երգել «Հետևիր մարգարեին» երգի կրկներգը՝ մինչ նրանք ուղևորվում են մի ղեկավարի մոտից մյուսը: Վկայեք օրհնությունների մասին, որոնք գալիս են, երբ մենք հետևում ենք մարգարեին:

Օգնեք կիրառել *(նշաններ պատրաստել).* Թող երեխաները նկարեն ճանապարհի իրենց սեփական նշանները և գրեն դրանց վրա, թե ինչպես են նրանք հետևելու ապրող մարգարեի ուսմունքներին: Թող նրանք նշանները իրենց հետ տանեն տուն՝ դրանք կօգնեն նրանց հիշել հետևել մարգար եին:

Սեղմեք այստեղ ուրվապատկերների համար:

Օգնություն երաժշտության ղեկավարին

Որպեսզի օգնեք երեխաներին սովորել «Պաշտպանել ճշմարտությունը» երգը (*ՀՏ,* 159), խորհեք հետևյալի շուրջ.

- Ցույց տվեք մեր օրերի մարգարեի նկարը և համառոտ քննարկեք մեզ տված նրա հրահանգներից մի քանիսը: Ասեք երեխաներին, որ երգը, որը նրանք կսովորեն, բացատրում է մարգարեին հետևելու կարևորությունը:
- Երեխաներին բաժանեք խմբերի: Յուրաքանչյուր խմբի տվեք երգի մեկ կամ երկու տող և հրավիրեք նրանց ստեղծել գործողություններ, որոնք կօգնեն նրանց հիշել բառերը: Թող յուրաքանչյուր խումբ սովորեցնի իր գործողությունները մնացած երեխաներին:

Երբ երեխաներին երգ եք սովորեցնում, օգտագործեք ձեր ձեռքը՝ մեղեդին նրանց ցույց տալու համար: Բարձրացրեք և իջեցրեք ձեր ձեռքը, երբ տոնայնությունը փոխվում է (տես ՈՒՉԱՄԿ, *174):*

Ամենի հավանական է, որ երեխաները կիրառեն վարդապետությունները, եթե ունենան իրենց սեփական ներդրումը: Երեխաները նաև իրենց սիրված ու կարևոր են զգում, երբ իրենց մտքերը կրկնում են ուսուցիչներն ու մյուս երեխաները:

Երգեր. *Վարդապետության մասին երգելը օգնում է երեխաներին սովորել և հիշել այն: Երեխաները նաև ավելի լավ են սովորում, երբ նրանք տեսնում են ցուցադրական նյութեր կամ վարժություն են կատարում երաժշտության հետ մեկտեղ: Այս ամսվա խորհուրդները մի շարք օրինակներ են տալիս, թե ինչպես կարելի է այս անել տարբեր ճանապարհներով: Ուրիշ դասեր ծրագրելիս մտածեք նմանատիպ գաղափարների մասին: (Տես* ՈՒՉԱՄԿ, *172-75):*

Ապրիլ

Հիսուս Քրիստոսն Իմ Փրկիչն ու Քավիչն է

Ձեր ընտրությամբ երգեք *Երեխաների խմբի* երգերից մեկը:

«Մենք հավատում ենք, որ Քրիստոսի Քավության շնորհիվ ողջ մարդկությունը կարող է փրկվել՝ հնազանդվելով Ավետարանի օրենքներին և արարողություններին» (Հավատո Հանգանակ 1.3):

Այստեղ տրված մտքերին ավելացրեք ձեր մտքերը: Պլանավորեք, թե ինչպես կարող եք երեխաներին ներկայացնել վարդապետությունը և օգնել նրանց հասկանալ և կիրառել այն իրենց կյանքում: Հարցրեք ինքներդ ձեզ. «Ի՞նչ պետք է անեն երեխաները, որպեսզի սովորեն, և ինչպե՞ս կարող եմ ես օգնել նրանց զգալ Հոգին»:

Սուրբ գրություններ մտապահելը *կարող է օգնել երեխաներին ավետարանի վարդապետություններ սովորելիս: Սուրբ Հոգին կօգնի երեխաներին հիշել այս բառերը անհրաժեշտ պահին: (Տե՛ս* ՈՒՉԱՄԿ, *171-72):*

Շաբաթ 1. Հիսուս Քրիստոսը ընտրված էր լինելու մեր Փրկիչը:

Ներկայացրեք վարդապետությունը *(տառերի վերադասավորում).* Գրատախտակին գրեք «Հիսուս Քրիստոսը _____ պետք է լիներ մեր Փրկիչը»: Թող *ը, և, տ, ր, վ, ա* և *ծ* տառերը ցրված լինեն սենյակով մեկ: Թող երեխաները վերադասավորեն տառերը և վերականգնեն նախադասությունը: Խնդրեք նրանց կարդալ Մովսես 4.2 իրենց պատասխանը ստուգելու համար: Միասին կարդացեք գրատախտակին գրվածը:

Օգնեք հասկանալ *(երգ երգել).* Պատրաստեք երեք բառաշերտեր՝ ամեն մեկի վրա գրված հետևյալ հարցերից մեկը «Ես ապրել եմ երկնքում» (*CS,* 4) երգի վերաբերյալ.

1. Մինչև մեր երկիր գալը ո՞վ երկնքում բոլորին ծրագիր ներկայացրեց:
2. Ո՞վ ասաց. «Հայր, ինձ ուղարկիր, և փառքը թող քոնը լինի»:
3. Հետևելով Հոր ծրագրին Հիսուսը ինչի՞ն հաղթեց:

Թող երեխաները երգեն երգի առաջին տունը և կանգնեն, երբ երգեն առաջին հարցի պատասխանը: Այնուհետև քննարկեք, թե ուրիշ ինչ նրանք սովորեցին այս քառատողից: Փորձեք կրկին երգել տունը ձեր քննարկումից հետո: Այնուհետև կրկնեք վարժությունը մյուս քառատողերով ու հարցերով:

Երգեր. *Երեխաների խմբի երգերը այնպես են սովորեցնում ավետարանի ճշմարտությունները, որ երեխաները կհիշեն դրանք իրենց ողջ կյանքի ընթացքում(տես* ՈՒՉԱՄԿ, *172-75):*

Շաբաթ 2. Հիսուս Քրիստոսը ինձ համար կատարյալ օրինակ է:

Ներկայացրեք վարդապետությունը *(հետևել օրինակներին).* Երգեք «Արա ինչպես ես»(*CS,* 276) երգը, և խնդրեք երեխաներին հետևել ձեզ՝ մինչ դուք որոշ պարզ գործողություններ եք անում, ինչպես օրինակ՝ ծափ տվեք, ձեր ձեռքերը բարձրացրեք ձեր գլխից վեր կամ տեղում քայլեք: Ասեք երեխաներին անվանել որոշ բաներ, որ նրանք սովորել են ինչ-որ մեկի օրինակին հետևելով (օրինակ՝ ինչպես հավաքել անկողինը կամ խաղ խաղալ): Գրատախտակին գրեք «Հիսուս Քրիստոսը ինձ համար կատարյալ օրինակ է»: Վկայեք, որ Քրիստոսը երկրի վրա ապրած միակ անձն էր, ով կատարյալ օրինակ եղավ մեզ համար, որին կարող ենք հետևել: Օգնեք երեխաներին միասին կարդալ նախադասությունը:

Օգնեք կիրառել *(կիսվել մտքերով).* Ցույց տվեք Հիսուսի մի քանի նկար, որտեղ Նա սիրում ու ծառայում է ուրիշներին: Գրատախտակին գրեք «Հիսուսը սիրում էր բոլորին» և «Հիսուսը ծառայում էր ուրիշներին»: Այս արտահայտությունների տակ նկարեք սիրտ և ձեռք: Ասեք երեխաներին, որ մենք պետք է հետևենք Հիսուսի օրինակին՝ սիրելով ու ծառայելով ուրիշներին: Յուրաքանչյուր երեխայի տվեք թղթի մի կտոր և թող նրանք սիրտ նկարեն կամ ուրվագծեն իրենց ձեռքը: Այնուհետև հրավիրեք նրանց գրել կամ նկարել մի բան, որ իրենք կարող են անել և հետևել Հիսուսի օրինակին: Թող երեխաները կիսվեն իրենց մտքերով Երեխաների Խմբի հետ և դնեն իրենց թղթերը Հիսուսի նկարների կողքին: Երգել «Ես փորձում եմ լինել Հիսուսի նման» (*CS,* 78–79) երգը:

Շաբաթ 3. Քրիստոսի Քավությամբ ամբողջ մարդկությունը կարող է փրկվել:

Ներկայացրեք վարդապետությունը *(անգիր սովորել հավատո հանգանակ).* Երեխաներին բաժանեք խմբերի և յուրաքանչյուր խմբի տվեք մի հատված երրորդ հավատո հանգանակից: Թող յուրաքանչյուր խումբ ճիշտ հերթականությամբ կանգնի ու կրկնի իր մասը: Այնուհետև թող ամբողջ Երեխաների Խումբը կանգնի ու կրկնի ամբողջ հավատո հանգանակը:

Օգնեք հասկանալ *(տեսնել առարկայական դաս).* Վկայեք,որ ճանապարհներից մեկը, որով Հիսուս Քրիստոսի Քավությունը փրկում է մեզ, դա այն է, որ այն մեզ փրկում է մեղքից: Երեխաներին ցույց տվեք մի բաժակ մաքուր ջուր և բացատրեք, որ այն ներկայացնում է մի անձի, ով ազատ է մեղքից: Ջրի մեջ կաթացրեք մի փոքր սննդի ներկ: Ցուցադրեք, թե ինչպես է սննդի ներկը տարածվում ջրի մեջ և այն այլևս մաքուր չէ: Բացատրեք, որ երբ մենք մեղք ենք գործում, մենք այս ջրի պես դառնում ենք անմաքուր: Այնուհետև ավելացրեք մի քանի կաթիլ գունաթափող հեղուկ ջուր կրկին մաքուր դարձնելու համար: Բացատրեք, որ երբ մենք ապաշխարում ենք, Քավությունը մաքրում է մեզ մեղքից և մենք ներվում ենք: Ցույց տվեք Քրիստոսի նկարը Գեթսեմանիում: Թող երեխաները կիսվեն նրանով, ինչ գիտեն նկարի մասին: Վկայեք մեր հանդեպ Հիսուս Քրիստոսի սիրո մասին և նրա պատրաստակամության մասին՝ վճարելու մեր մեղքերի գինը:

Օգնեք կիրառել *(քննարկելով ապաշխարությունը).* Օգտագործելով այս գրքույկում ներկայացված ուսուցման մեթոդներից մի քանիսը, սովորեցրեք երեխաներին ապաշխարության մասին, որը ընդգրկում է զղջելը, ներում խնդրելը, ուղղել սխալը և սխալը չկրկնելը (տես *Երեխաների Միություն 3,*46-49):

Շաբաթ 4. Հիսուս Քրիստոսը հարություն առավ, և ես նույնպես հարություն կառնեմ:

Օգնեք հասկանալ *(պատմել պատմություններ սուրբ գրություններից).* Նկարներ օգտագործեք և հակիրճ պատմեք Հիսուսի մահվան պատմությունը (տես Մատթեոս ԻԷ.33-60; Մարկոս ԺԵ.22-46; Ղուկաս ԻԳ.33-53; Հովհաննես ԺԹ.17-42): Խնդրեք երեխաներին մտածել այն մասին, թե ինչպես էին իրենց զգում Հիսուսի ընտանիքն ու ընկերները, երբ Նա մահացավ: Նախօրոք խնդրեք մի քանի երեխաների (կամ մեծերի) պատրաստված զալ Երեխաների Խումբ՝ կիսվելու Հիսուս Քրիստոսի Հարության վկաներից մեկի պատմությամբ, ինչպես օրինակ՝ Մարիամ Մագդաղենացին,Հովհաննես Ի.11-18), Պետրոսը և Հովհաննեսը (տես Հովհաննես Ի.2-10), աշակերտները (տես Հովհաննես Ի.19-22, Ղուկաս ԻԴ.33-53), Թովմասը (տես Հովհաննես Ի.24-29), և Նեփիացիները (տես 3 Նեփի 11.8-17):

Նրանց տվեք պիտակներ, որոնց վրա նշված կլինի, թե ում պատմությամբ են նրանք կիսվում:



«Հաճախ ավելի հեշտ է հասկանալ ավետարանի հիմունքը , երբ այն ներկայացվում է որպես սուրբ գրության պատմության մաս» (ՈՒՉԱՄԿ, *55):*

Նկարներ կարող եք գտնել sharingtime.lds.org կայքում

Առարկայական դասերը *կարող են օգտագործվել հետաքրքրություն առաջացնելու, երեխաների ուշադրությունը կենտրոնացնելու կամ ավետարանի սկզբունքը ներկայացնելու համար (տես* ՈՒՉԱՄԿ, *164): Եթե դուք չունեք շաբաթ 3-ում նկարագրված առարկայական դասի համար անհրաժեշտ նյութերը, մտածեք, թե ինչպես կարող եք օգտագործել ձեռքի տակ եղած նյութերը: Օրինակ, կեղտոտ ձեռքը մաքուր դարձնելու համար դուք կարող եք այն լվանալ օճառով:*

Մայիս

Հիսուս Քրիստոսի Եկեղեցին վերականգնվել է

Երգ. «Փառք տանք Մարդուն», տուն 1 և 3
(*Hymns*, no. 116)

«Ես տեսա երկու Անձնավորություն, ինձնից վեր՝ օդի մեջ կանգնած, որոնց պայծառությունն ու փառքն ամեն նկարագրությունից վեր էր: Նրանցից մեկը խոսեց ինձ հետ, դիմելով ինձ անունով, և ասաց՝ մատնացույց անելով մյուսին. Սա է Իմ Միրելի Որդին: Լսի՛ր Նրան» (Ջոզեֆ Սմիթ-Պատմություն 1.17):

Այստեղ տրված մտքերին ավելացրեք ձեր մտքերը: Պլանավորեք, թե ինչպես կարող եք երեխաներին ներկայացնել վարդապետությունը և օգնել նրանց հասկանալ և կիրառել այն իրենց կյանքում: Հարցրեք ինքներդ ձեզ. «Ի՞նչ պետք է անեն երեխաները, որպեսզի սովորեն, և ինչպե՞ս կարող եմ ես օգնել նրանց զգալ Հոգին»:

Սեղմեք այստեղ տիկնիկների համար

Տարբեր տարիքային խմբեր. *Այնպես պլանավորեք ձեր միացյալ ժամը, որպեսզի ներգրավեք և մեծ և փոքր երեխաներին: Օրինակ, շաբաթ 1-ի երկրորդ վարժությունում դուք կարող եք օգտագործել տիկնիկներ՝ օգնելով փոքրիկներին հիշել յուրաքանչյուր տիտղոսը: Շաբաթ 2-ի վարժությունում դուք կարող եք երեխաներին բաժանել տարիքային խմբերի և թող ուսուցիչները փոքրիկներին պատմեն պատմություններ և հետո կրկնեն՝ նկարները ցուցադրելով ու հարցեր տալով:*

Շաբաթ 1. Հիսուս Քրիստոսի Եկեղեցին վերականգնվել է:

Ներկայացրեք վարդապետությունը *(սովորել հավատո հանգանակ).* Մինչև Երեխաների Խմբի դասի սկսվելը վեցերորդ հավատի հանգանակը գրեք գրատախտակին: Խնդրեք երեխաներին փակել իրենց աչքերը: Ասեք նրանց, որ Հիսուս Քրիստոսի մահից հետո մարդիկ մեղավոր դարձան և Նրա ավետարանը և քահանայությունը վերցվեցին երկրի վրայից: Բացատրեք, որ դա կոչվեց Ուխտադրժություն, և մարդիկ հոգևոր խավարի մեջ էին, կարծես փակել էին իրենց աչքերը հոգևորապես, մինչև Հիսուսը վերականգնեց Իր Եկեղեցին Ջոզեֆ Սմիթի միջոցով: Ցուցադրեք Առաջին Տեսիլքի նկարը և ասեք երեխաներին, որ բացեն իրենց աչքերը: Օգնեք երեխաներին անգիր սովորել հավատո վեցերորդ հանգանակը՝ միասին բարձրաձայն կարդալով: Ջնջեք որոշ բառեր և կրկնեք, մինչև բոլոր բառերը ջնջվեն և երեխաները սովորեն հավատո հանգանակը:

Օգնեք հասկանալ *(խաղալ համընկումների խաղ).* Ներքևում ցուցադրված աղյուսակի պարտականություններից յուրաքանչյուրի համար բառաշերտեր պատրաստեք: Գրատախտակին գրեք յուրաքանչյուր բաժնի վերնագիրը՝ ինչպես ցուցադրված է, և մեջտեղում թողեք դատարկ սյունակ՝ պարտականությունները ներկայացնելու համար: Երեխաներին բաժանեք հինգ խմբի, և յուրաքանչյուր խմբին տվեք «Պարտականություններ» բառաշերտերից մեկը: Հրավիրեք յուրաքանչյուր խմբի դնել իր բառաշերտը գրատախտակի վրա ճիշտ տեղում: Նշեք, որ վերականգնված Եկեղեցին ունի նույն ղեկավարները, ինչ որ Եկեղեցին ուներ այն ժամանակ, երբ Հիսուս Քրիստոսը երկրի վրա էր:

ԿՈՉՈՒՄԸ ՀԻՆ ԵԿԵՂԵՑՈՒՄ	ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	ԿՈՉՈՒՄԸ ՎԵՐԱԿԱՆԳՆՎԱԾ ԵԿԵՂԵՑՈՒՄ
Առաքյալ	Լինել Հիսուս Քրիստոսի հատուկ վկա	Առաքյալ
Մարգարե	Հայտնել Երկնային Հոր կամքը	Մարգարե
Քահանա	Առաջնորդել Սրբերի մի փոքր խումբ	Եպիսկոպոս
Ուսուցիչ	Սովորեցնել ավետարանը	Ուսուցիչ
Ավետարանիչ	Տալ հատուկ օրհնություններ	Հայրապետ

Սեղմեք այստեղ բառաշերտերի համար:

Շաբաթ 2. Ջոզեֆ Սմիթը վերականգնման մարգարեն է:

Օգնեք հասկանալ *(սուրբ գրություններից նկարներ և պատմություններ կիսել).* Եկեղեցու Վերականգնման իրադարձությունների վերաբերյալ նկարներ հավաքեք: «Ջոզեֆ Սմիթը Վերականգնման մարգարեն է» նախադասությունը բաժանեք այնքան մասերի, որքան որ նկարներ ունեք, և բառաշերտեր պատրաստեք յուրաքանչյուր բառի կամ բառակապակցության համար (տես օրինակը): Երեխաներին բաժանեք խմբերի, և յուրաքանչյուր խմբի տվեք մեկական բառաշերտ, նկար և սուրբ գրության հատված, որ նկարագրում է, թե ինչ է տեղի ունենում նկարում: Խնդրեք երեխաներին, որ կարդան սուրբ գրությունները և քննարկեն, թե ինչ է տեղի ունենում նկարում: Այնուհետև թող յուրաքանչյուր խումբ կիսվի իր պատմությամբ Երեխաների խմբի հետ: Քննարկեք Ջոզեֆ Սմիթի դերը յուրաքանչյուր իրադարձության մեջ, և թող երեխաները մտածեն ,թե ինչպես է իրադարձությունը ազդել կամ կարող է ազդել

Ջոզեֆ Սմիթը	Սմիթը	Վերա-կանգնման	մարգարեն	է:	ՎԿՈՒ
ՋՍ-Պ 1.5-13	ՋՍ-Պ 1.14-20	ՋՍ-Պ 1.30-35	ՋՍ-Պ 1.34-35,67	ՋՍ-Պ 1.68-73	109.2-4

Սեղմեք այստեղ բառաշերտերի և պատկերների համար:

իրենց կյանքի վրա: Յուրաքանչյուր նկար ու բառաշերտ հաջորդականությամբ տեղադրեք գրատախտակի վրա: Բոլոր բառաշերտերը գրատախտակին դնելուց հետո միասին կարդացեք նախադասությունը:

Շաբաթ 3. Մորմոնի Գիրքը ևս մեկ վկայություն է Հիսուս Քրիստոսի մասին:

Օգնեք հասկանալ *(կարդալ սուրբ գրությունները).* Միասին կարդացեք Մորմոնի Գրքի վերնագիրը կազմի վրա: Բարձրաձայն կարդացեք հետևյալ սուրբ գրությունները և թող երեխաները ձեռք բարձրացնեն, երբ նրանք լսեն Փրկչի ևս մեկ անուն. 2 Նեփի 19.6, Ալմա 5.38, 3 Նեփի 5.26: Երբ երեխաները ճանաչեն տիտղոսները, գրեք դրանք գրատախտակին: Ընտրեք մի քանի տիտղոսներ և բացատրեք, թե ինչպես է Փրկիչը դրանք իրագործում:

Օգնեք կիրառել *(պատրաստել էջանշան).* Յուրաքանչյուր երեխայի տվեք էջանշան, որի վրա գրված է «Մորմոնի Գիրքը. ևս մեկ վկայություն է Հիսուս Քրիստոսի մասին» նախադասությունը: Հրավիրեք նրանց ձևավորել էջանշանը և օգտագործել այն իրենց սուրբ գրություններում: Նկատի ունեցեք, որ մի քանի երեխա զեկուցեն սուրբ գրությունները կանոնավոր կերպով ուսումնասիրելու սովորություն ձևավորելու իրենց նպատակի մասին (տես Հունվար, շաբաթ 2): Դուք կարող եք հրավիրել նրանց կիսվել իրենց զգացմունքներով սուրբ գրություններից իրենց կարդացած հատվածների վերաբերյալ:

Սեղմեք այստեղ էջանշանների համար:

Կիսվել զգացմունքներով. *Երեխաներին հնարավորություն տվեք կիսվել ավետարանի մասին իրենց զգացմունքներով: Սա կիրավիրի հոգին և կօգնի երեխաներին ավելի լավ հասկանալ, թե ինչպես է վարդապետությունը վերաբերում իրենց կյանքին: (Տես* ՈՒՉԱՄԿ, *63–65:)*

Շաբաթ 4. Քահանայությունը վերականգնվել է:

Ներկայացրեք վարդապետությունը *(ցուցադրեք առարկայական դաս).* Երեխաներին ցույց տվեք էլեկտրականությամբ աշխատող մի սարք:

Այնուհետև ցույց տվեք, որ առանց համապատասխան էլեկտրականության այն չի կարող աշխատել: Թող երեխան ցուցադրի նկար, որտեղ Քրիստոսը կարգում է Իր Առաքյալներին: Բացատրեք, որ Քրիստոսի Եկեղեցին չի կարող գործել առանց քահանայության իշխանության: Թող երեխան թաքցնի նկարը իր ետևում: Բացատրեք, որ Քրիստոսի Առաքյալների մահից հետո քահանայության իշխանությունը կորցվել էր: Թող մեկ այլ երեխա ցուցադրի քահանայության վերականգնման նկար: Վկայեք, որ Աստված վերականգնել է քահանայությունը Ջոզեֆ Սմիթի միջոցով:

Օգնեք հասկանալ *(երգել և խաղալ համապատասխան խաղ).* Խնդրեք որևէ մեկին կարդալ ՎԿՈՒ 107.1, և թող երեխաները լսեն երկու քահանայությունների անունները: Գրատախտակին դրեք Ասհարոնյան Քահանայության վերականգնման նկար և Մելքիսեդեկյան Քահանայության վերականգնման նկար: Գրեք *Ահարոնյան* կամ *Մելքիսեդեկյան* համապատասխան նկարի վերևում: Քննարկեք, թե ով վերականգնեց կամ ետ բերեց այս քահանայություններից յուրաքանչյուրը Ջոզեֆ Սմիթին (տես Ջոզեֆ Սմիթ-Պատմություն 1.72):

Երեխաներին ցույց տվեք քահանայության արարողությունների մի քանի նկարներ, ինչպիսիք են՝ մկրտությունը, հաստատումը, հաղորդությունը բաժանելը, հաղորդությունը օրհնելը և հիվանդին բուժելը: Հրավիրեք երեխաներին փոխանցել նկարները, «Քահանայությունը վերականգնվել է» երգելով (*CS,* 89): Երաժշտությունը հանկարծակի դադարեցրեք և նկարները բռնած երեխաներին խնդրեք կանգնել *Ահարոնյան* կամ *Մելքիսեդեկյան* բառերի մոտ՝ ցույց տալով այդ արարողությունը կատարելու համար պահանջվող իշխանությունը: Կրկնեք, եթե ժամանակը թույլ է տալիս:

Օգնեք կիրառել *(գրել շնորհակալական երկտող).* Թող երեխաները մտածեն, թե ինչպես է քահանայությունը օրհնել իրենց: Հրավիրեք նրանց պատրաստել շնորհակալական բացիկ կամ նկար և տալ մեկին, ով քահանայություն ունի, ում նրանք ճանաչում են (ինչպես օրինակ՝ եպիսկոպոս, ուսուցիչ, հայր կամ միսիոներ):

Նկարներ կարող եք գտնել sharingtime.lds.org կայքում

Շաբաթ 4-ի վարժությունը ձեզ հնարավորություն կտա ստուգել երեխաների գիտելիքները: Կրկնությունը կարող է նրանց մտքում ամրապնդել գաղափարը:

Հունիս

Ձեր ընտրությամբ երգեք *Երեխաների Խմբի* երգերից մեկը:

Կրկնություն. *Երեխաները սովորում են կրկնության միջոցով: Նկատի ունեցեք շաբաթ 1-ում ժամանակ տրամադրել առարկայական դասին՝ հավատի սկզբունքը ակնառու դարձնելու համար: Սերմերը տնկեք թաղարի մեջ և ժամանակ առ ժամանակ մեծացող բույսը բերեք Երեխաների Խումբ: Պատմեք երեխաներին, թե դուք ինչ եք արել, որ օգնեք բույսը մեծանա: Սածիլը մեծացնելը համեմատեք հավատքն առ Հիսուս Քրիստոս մեծացնելու հետ:*

Ավետարանի առաջին սկզբունքներն ու ծեսերը ինձ հնարավորություն կտան կրկին ապրել Աստծո հետ

«Մենք հավատում ենք, որ Ավետարանի առաջնային սկզբունքներն ու արարողություններն են. առաջին՝ Հավատք առ Տեր Հիսուս Քրիստոս. երկրորդ՝ Ապաշխարություն. երրորդ՝ ընկղմամբ Մկրտություն մեղքերի թողության համար. չորրորդ՝ Ձեռնադրում Սուրբ Հոգու պարգևի համար» (Հավատոց Հանգանակ 1.4):

Այստեղ տրված մտքերին ավելացրեք ձեր մտքերը: Պլանավորեք, թե ինչպես կարող եք երեխաներին ներկայացնել վարդապետությունը և օգնել նրանց հասկանալ և կիրառել այն իրենց կյանքում: Հարցրեք ինքներդ ձեզ. «Ի՞նչ պետք է անեն երեխաները, որպեսզի սովորեն, և ինչպե՞ս կարող եմ ես օգնել նրանց զգալ Հոգին»:

Շաբաթ 1. Հավատն առ Հիսուս Քրիստոս օգնում է մեզ սիրել Նրան, վստահել Նրան և պահել Նրա պատվիրանները:

Ներկայացրեք վարդապետությունը և օգնեք հասկանալ *(տեսնել առարկայական դաս և երգ երգել).* Գրատախտակին գրեք «Հավատն առ Հիսուս Քրիստոս օգնում է մեզ սիրել Նրան, վստահել Նրան և պահել Նրա պատվիրանները»: Երեխաներին ցույց տվեք մի քանի սերմեր: Հարցրեք. «Ի՞նչ կարող են դառնալ այս սերմերը»: «Ինչպե՞ս գիտեք, որ սերմերը կաճեն»: «Ի՞նչ պետք է մենք անենք, որ դրանք աճեն»: Բացատրեք, որ մեր հավատքն առ Հիսուս Քրիստոս, ճիշտ ինչպես սերմը, կարող է աճել, եթե մենք խնամենք այն: Քննարկեք բաներ, որ մենք կարող ենք անել, որ օգնենք մեր հավատը աճի, և բացատրեք, թե այս բաները ինչպես մեզ կօգնեն սիրել և վստահել Հիսուս Քրիստոսին և պահել Նրա պատվիրանները: Երգեք «Հավատք» (*CS*, 96–97) երգը: Հորինեք հասարակ ձեռքի շարժումներ, որոնք կհամապատասխանեն առաջին քառյակին:



Նկար կարող եք գտնել sharingtime.lds.org կայքում

Շաբաթ 2. Ապաշխարությունը ներում է բերում:

Ներկայացրեք վարդապետությունը *(կարդալ սուրբ գրությունները).* Հրավիրեք երեխաներին բացել իրենց սուրբ գրությունները և կարդալ Վարդապետություն և Ուխտեր 58.42-43: Խնդրեք նրանց ներկայացնել, թե ինչ է տեղի ունենում, երբ մենք ապաշխարում ենք մեր մեղքերը: (Եթե հնարավոր է, հրավիրեք երեխաներին ընդգծել այս հատվածները իրենց սուրբ գրություններում): Երեխաներին համառոտ պատմեք Ենովսի մասին (տես Ենովս 1.1-4), և թող երեխաներից մեկը կարդա Ենովս 1.5-8: Վկայեք, որ Հիսուս Քրիստոսի Քավությունը հնարավոր է դարձնում մեզ համար, որ մեր մեղքերը ներվեն:

Օգնեք հասկանալ *(բեմականացում).* Բացատրեք, որ այն մարդիկ, ովքեր ապաշխարել են և նրանց ներվել են իրենց մեղքերը, ցանկություն ունեն ծառայել Աստծուն: Երեխաներին բաժանեք երեք խմբի, և յուրաքանչյուր խմբի տվեք հետևյալ նկարներից ու սուրբ գրությունների հղումներից մեկը. Ալման մկրտում է Մորմոնի Ջրերում (Մոսիա17.2-4,18.1-17), Հովնան (Հովնան 1-3), Անթի-Նեփի-Լեքիները թաղում են իրենց սրերը (Ալմա 23.4-18, 24.6-19): Բացատրեք, որ այս պատմությունները պատմում են մարդկանց մասին, ովքեր ապաշխարել են իրենց մեղքերը և ծառայել են Տիրոջը: Խնդրեք յուրաքանչյուր խմբի քննել սուրբ գրությունները և պատրաստել ու ներկայացնել բեմականացում, որտեղ ցուցադրվում է, թե ինչպես են այս մարդիկ ապաշխարել և այնուհետև ծառայել Տիրոջը (ուսուցանելով ավետարանը, միսիա ծառայելով և հրաժարվելով կռվել):

Շաբաթ 3. Մկրտվելիս ես ուխտ եմ կապում Աստծո հետ:

Օգնեք հասկանալ *(տեսնել առաջնակարգական դաս).* Խնդրեք երեխաներից մեկին կանգնել դասարանի առաջ ու բարձրացնել ձեռքերը: Այնուհետև յուրաքանչյուր ձեռքում մի գիրք դրեք: Կարդացեք Մոսիա 18.7-11: Բացատրեք, որ մկրտվելիս կապած ուխտերից մեկն այն է, որ «կրե[նք] մեկ[ս] մյուսի բեռը, որ դրանք թեթև լինեն»: Հարցրեք գրքերը պահող երեխային, թե արդյոք նրա ձեռքերը չեն հոգնում: Ուրիշ երկու երեխաներ թող օգնեն նրան բարձր պահել իր ձեռքերը: Քննարկեք որոշ խնդիրներ, որ երեխաները կարող են ունենալ, ինչպես օրինակ՝ ծաղրի ենթարկվելը, հիվանդանալը, միայնակ զգալը կամ դպրոցում դժվարությունների հանդիպելը: Հարցրեք երեխաներին, թե ինչպես նրանք կարող են օգնել թեթևացնել մեկը մյուսի բեռները:

Օգնեք կիրառել *(խաղալ խաղ).* Ասեք երեխաներին, որ մկրտությունը դարպասն է, որ տանում է դեպի հավերժական կյանքի ուղին(տես 2 Նեփի 31.17): Սենյակի մի կողմում դրեք մկրտվող երեխայի նկար: Սենյակի մյուս կողմում դրեք Փրկչի նկարը և բացատրեք, որ այս վարժության մեջ այս նկարը ներկայացնում է հավերժական կյանքը: Ասեք երեխաներին, որ մենք մնում ենք հավերժական կյանքի ուղու վրա, եթե պահում ենք մեր մկրտության ուխտերը: Համառոտ վերհիշեք այս ուխտերը (հիշել Հիսուս Քրիստոսին, հնազանդվել պատվիրանների և օգնել ուրիշներին): Յուրաքանչյուր երեխայի տվեք մի թուղթ, որի վրա նկարված է ԸՃ վահանակ: Թող երեխաները իրենց թղթի վրա գրեն պատվիրան, որը կօգնի նրանց պահել իրենց մկրտության ուխտերը (նրանք կարող են նկարել իրենց ընտրած պատվիրանը ներկայացնող նկարներ): Հրավիրեք մի երեխայի դնել իր թուղթը գետնին՝ երկու նկարների միջև: Եթե հնարավոր է օգնեք երեխաներին սուրբ գրություններում գտնել պատվիրանը և միասին կարդացեք այն: Կրկնեք, մինչ երեխաները նկարների միջև ուղի կպատրաստեն:

Սեղմեք այստեղ լոգոտիպի համար:

Երեխաներին որպես ցուցադրման միջոց օգտագործելը կգրավի նրանց ուշադրությունը և նրանց սովորելուն կպատրաստի: Օրինակ, այս վարժությունը երեխաներին ցուցադրում է մեկը մյուսի բեռը կրելու գաղափարը:

Շաբաթ 4. Սուրբ Հոգին մխիթարում ու առաջնորդում է ինձ:

Օգնեք հասկանալ *(կարդալ սուրբ գրությունները).* Երեխաներին բաժանեք խմբերի և յուրաքանչյուր խմբի տվեք հետևյալ սուրբ գրություններով մի թերթիկ:

- «Ճշմարիտ, ճշմարիտ ասում են քեզ. Ես քեզ բաժին պիտի հանեմ իմ Հոգուց, որը կլուսավորի քո միտքը, որն . . . կլցնի քո հոգին _____» (ՎևՈ 11.13):
- «Եթե դուք մտնեք այդ [մկրտության] ճանապարհով և ստանաք Սուրբ Հոգին, այն _____ ձեզ . . . բոլոր բաները , որ դուք պետք է անեք» (2 Նեփի 32.5):
- «Մխիթարիչը՝ Սուրբ Հոգին, . . . _____ . . .ամեն բան . . . ձեզ, և . . . ձեզ _____ ամեն ինչ որ ձեզ ասացի» (Հովհաննես ԺԴ. 26):
- «Ապավինիր այն Հոգուն, որն առաջնորդում է . . . գործել. _____ այո՛, արդար գործել, խոնարհ քայլել, . . . _____ _____. և դա է իմ Հոգին» (ՎևՈ 11.12):
- «Եվ Սուրբ Հոգու զորությամբ դուք կարող եք _____ _____ _____ բոլոր բաների վերաբերյալ» (Մորոնի 10.5):

Խնդրեք երեխաներին գտնել սուրբ գրությունները և լրացնել բացթողումները: Այնուհետև թող նրանք քննարկեն, թե ինչ են այս սուրբ գրությունները սովորեցնում այն մասին, թե ինչպես կարող է Սուրբ Հոգին օգնել մեզ: Հրավիրեք նրանց կիսվել փորձառությամբ, երբ Սուրբ Հոգին օգնել է իրենց:

Օգնեք կիրառել *(երգ երգել).* Ասեք երեխաներին, որ Սուրբ Հոգին օգնում է մեզ տարբեր ճանապարհներով: Երգեք «Սուրբ Հոգին» (*CS,* 105): Խնդրեք երեխաներին բարձրացնել իրենց ձեռքերը, երբ նրանք երգեն ճանապարհների մասին, որոնցով Սուրբ Հոգին կարող է օգնել իրենց: Դադարեցրեք երգը և քննարկեք, թե ինչ նրանք սովորեցին Սուրբ Հոգու մասին: Շարունակեք երգել ու քննարկել: Կիսվեք ժամանակներով, երբ Սուրբ Հոգին մխիթարել ու առաջնորդել է ձեզ:

Սուրբ գրություններ. *Շատ կարևոր է, որ երեխաները սուրբ գրություններից սովորեն ավետարանի սկզբունքները (տես* ՈՒՉԱՄԿ, *50-51): Հրավիրեք երեխաներին մատներով հետևել ամեն բառին, մինչ դուք բարձրաձայն կարդում եք սուրբ գրությունները: Խնդրեք համեմատաբար փոքրերին ուշադիր լսել և յուրահատուկ բառ կամ արտահայտություն լսելիս ձեռք բարձրացնել:*

Սեղմեք այստեղ աշխատանքային նյութերի համար:

Հուլիս

Երգ. «Ուզում եմ տեսնել տաճարը»
(CS, 95105)

Տաճարը Աստծո տունն է

«Սուրբ տաճարներում կատարվող սուրբ արարողություններն ու ուխտերը հնարավոր են դարձնում անհատների համար վերադարձը Աստծո ներկայություն, իսկ ընտանիքների համար՝ հավերժորեն միանալը» («Ընտանիք. Հայտարարություն աշխարհին», պարբերություն 3):

Այստեղ տրված մտքերին ավելացրեք ձեր մտքերը: Պլանավորեք, թե ինչպես կարող եք երեխաներին ներկայացնել վարդապետությունը և օգնել նրանց հասկանալ և կիրառել այն իրենց կյանքում: Հարցրեք ինքներդ ձեզ. «Ի՞նչ պետք է անեն երեխաները, որպեսզի սովորեն, և ինչպե՞ս կարող եմ ես օգնել նրանց զգալ Հոգին»:

Պատկերներ կարող եք գտնել sharingtime.lds.orgկայքում

Շաբաթ 1. Աստված պատվիրել է Իր ժողովրդին տաճարներ կառուցել:

Ներկայացրեք վարդապետությունը *(երգ երգել).* Ցուցադրեք տաճարի նկար և գրատախտակին գրեք «Տաճարը . . . է _____»: Հրավիրեք երեխաներին երգել ԵՈՒզում եմ տեսնել Տաճարը Ե երգի առաջին քառատողը (CS, 95): Ասեք նրանց, որ իրենց ձեռքերը ծալելով ազդանշան տան, երբ նրանք երգեն այն արտահայտությունը, որը լրացնում է գրատախտակին գրված նախադասությունը: Հարցրեք նրանց, թե ինչ է տաճարը (Աստծո տունը): Օգնեք երեխաներին Սուրբ Գրքերի ուղեցույցի թեմաների այբենական ցանկից գտնել «Տաճար»-բառը (էջեր 780-81): Օգնեք նրանց գտնել այնպիսի արտահայտություններ, որոնք բացատրում են, որ տաճարը ուղիղ իմաստով Տիրոջ տունն է և որ Աստված միշտ պատվիրել է Իր ժողովրդին տաճարներ կառուցել:

Օգնեք հասկանալ *(խաղալ գուշակող խաղ).* Հուշումներ պատրաստեք Մովսեսի (տես Ելից ԻԵ.1-2, 8-9), Նեփիի (տես 2 Նեփի 5.16) և Ջոզեֆ Սմիթի (տես ՎևՈՒ 124.31) ու նրանց հետևորդների կողմից պատրաստված տաճարների վերաբերյալ: Օրինակ. «Մեր տաճարը կոչվում էր խորան, և մենք տեղափոխում էինք այն, երբ ճամփորդում էինք» (Մովսես) կամ «Մենք տաճար կառուցեցինք Երուսաղեմից դուրս գալուց հետո, երբ ճանապարհորդում էինք ծովից այն կողմ» (Նեփի): Ընտրեք երեք երեխաների, որպեսզի ներկայացնեն այդ մարգարեներին, և խնդրեք նրանց հուշումներ տալ Երեխաների խմբին: Հրավիրեք մյուս երեխաներին գուշակել, թե երեխաներից ամեն մեկը ում է ներկայացնում: Նրանց ճիշտ գուշակելուց հետո ցույց տվեք մարգարեի կամ տաճարի նկարը, որը կառուցել են նա ու իր ժողովուրդը:

Օգնեք կիրառել *(քննարկել տաճարները).* Ցուցադրեք ձեզ ամենամոտը գտնվող տաճարի նկարը: Քննարկեք հետևյալ հարցերը. Ձեր կարծիքով, ինչու՞ է Աստված մեզ պատվիրում տաճարներ կառուցել: Ի՞նչ կարող եք դուք անել, որպեսզի պատրաստվեք մի օր տաճար գնալուն:

Հրապուրիչ պատասխաններ. *Ավելի հավանական է, որ երեխաները պատասխանեն հարցերին, եթե նրանց մտածելու ժամանակ է տրվի: Ասեք նրանց, որ դուք իրենց մտածելու ժամանակ կտաք նախքան պատասխանները հարցնելը: (Տես ՈՒՉԱՄԿ, 69):*

Շաբաթ 2. Ընտանիքները օրհնված են տաճարի սուրբ արարողությունների միջոցով:

Ներկայացրեք վարդապետությունը *(դասավորել բառերը և երգ երգել).* Հրավիրեք համեմատաբար մեծ երեխայի Երեխաների խմբի համար կարդալ «Ընտանիք. Հայտարարություն աշխարհին» երրորդ պարբերության վերջին երկու նախադասությունները: Հետևյալ բառերից ու արտահայտություններից յուրաքանչյուրը դրեք առանձին թերթիկների վրա. *Տաճարը, սուրբ վայր է, որտեղ մենք, միասին, կնքվում ենք:* Դրանք խառը դրեք գրատախտակին: Թող երեխաներից մեկը տեղափոխի թերթիկներից մեկը և դնի իր ճիշտ տեղում: Կրկնեք մինչև բոլոր բառերը իրենց ճիշտ տեղում կլինեն: Երգեք «Ուզում եմ տեսնել տաճարը» երգի

Դարգոդոշ ներկայացրեք ուսուցանվող վարդապետությունը: Դա օգնում է երեխաներին ավելի լավ հասկանալ և կիրառել այն:

Սեղմեք այստեղ բառաշերտերի համար:

երկրորդ տունը և թող երեխաների կեսը լսեն երկու բաներ, որ մենք անում ենք տաճարում (ուխտում ու խոստանում ենք հնազանդվել) և մյուս կեսը լսեն ճշմարտությունը ,որը սովորել են (ընտանիքը հավերժության համար է)։ Օգնեք երեխաներին հասկանալ, որ տաճարում ընտանիքով կնքվել նշանակում է, որ նրանք կարող են հավերժ միասին լինել։

Օգնեք կիրառել *(կիսվել զգացմունքներով և նկարներ նկարել).* Հրավիրեք մի ընտանիքի կամ մի քանի երեխաների կիսվել, թե ինչպես են նրանք իրենց զգում, երբ այցելում են տաճարի շրջակա տարածքը կամ ինչպես են նրանք օրհնվել տաճարի ու կնքման արարողությունների արդյունքում։ Երեխաներին հրավիրեք նկարել նկարներ, որտեղ իրենց ընտանիքը տաճարի մոտ է։

Սիրեք նրանց, ում դուք ուսուցանում եք. *Երբ դուք սովորեցնեք հավերժական ընտանիքների մասին, նրբանկատորեն մոտեցեք այն երեխաների մասին, ովքեր իրենց տանը չունեն և՛ հայր, և՛ մայր։ Նաև նրբանկատ եղեք այն երեխաների հանդեպ, ովքեր ունեն ծնողներ կամ քույրեր, եղբայրներ, որոնք ոչ ակտիվ են կամ ովքեր Եկեղեցու անդամներ չեն։ Խրախուսեք բոլոր երեխաներին արժանիորեն ապրել և պատրաստվել մի օր կարողանան ունենալ իրենց սեփական հավերժական ընտանիքները։ (Տես* ՈՒՉԱՄԿ, *31-32)։*

Շաբաթ 3. Պիոներները ջանասիրաբար աշխատում ու զոհաբերում էին, որ տաճարներ կառուցեին։

Օգնեք հասկանալ *(լսել հյուր խոսնակներին).* Տեղեկություններ հավաքեք Կիրթլենդի և Սոլթ Լեյքի Տաճարների և, եթե հնարավոր է, ձեր ապրած տեղին մոտ տաճարի կառուցման վերաբերյալ։ (Տես *Երեխաների Խումբ 5,* դասեր 25 և 44 կամ LDS.org Կիրթլենդի և Սոլթ Լեյքի Տաճարների մասին տեղեկությունների համար)։

Խնդրեք որոշ մեծերի գալ Երեխաների Խումբ և կիսել տեղեկություններ երեխաների հետ։ Երեխաներին բաժանեք խմբերի և թող խմբերը հերթով հանդիպեն մեծերից յուրաքանչյուրի հետ։ Երեխաներին հրավիրեք երգել «Տեսնում Եմ Ես Տաճարը»՝ մինչ նրանք տեղափոխվում են մի խոսնակ հյուրի մոտից դեպի մյուսը։

Դուք կարող է կարիք ունենաք հարմարեցնելու վարժությունները ձեր Երեխաների Խմբի կարիքներին։ Օրինակ, եթե ձեր Երեխաների Խումբը մեծ է, դուք կարող եք խնդրել հյուր խոսնակներին տեղափոխվել մի խմբի մոտից մյուս խմբի մոտ, երեխաներին մի խոսնակի մոտից մյուսի մոտ տեղափոխելու փոխարեն (տես ՈՒՉԱՄԿ, *179)։*

Շաբաթ 4. Ես կարող եմ պատրաստվել արժանի լինել տաճար գնալուն։

Օգնեք հասկանալ և կիրառել *(քննարկել և սովորեցնել ուրիշներին).* Ցուցադրեք «Ավետարանի Իմ Չափանիշները» և բացատրեք, որ այս չափանիշներին հետևելը մեզ կօգնի արժանի լինել տաճար գնալու։ Երեխաներին բաժանեք խմբերի։ Թող ուսուցիչը յուրաքանչյուր խմբում քննարկի չափանիշները, որոնք կօգնեն երեխաներին պատրաստվել տաճար գնալու և վկայեն, թե ինչպես է չափանիշներով ապրելը օգնել իրեն։ Խնդրեք յուրաքանչյուր խմբի ընտրել մեկական ավետարանի չափանիշ և այնուհետև գրել կամ նկարել այդ չափանիշին հետևելու իրենց պարտավորությունը։ Հրավիրեք եպիսկոպոսին կամ ճյուղի նախագահին Երեխաների Խումբ և թող յուրաքանչյուր խումբ նրա հետ կիսի իրենց խոստումը։ Հրավիրեք եպիսկոպոսին կամ ճյուղի նախագահին կիսվել տաճարների կարևորության մասին իրենց վկայությամբ։

Սեղմեք այստեղ պաստառի համար։

Տարեկան Պարտավորություն. *Հիշեք երեխաներին տալ հնարավորություններ կիսվելու նրանով, ինչ նրանք սովորում են իրենց սուրբ գրությունների ընթերցումից (տես Հունվար, շաբաթ 2)։*

Օգոստոս

Իմ մարմինը Աստծո տաճար է

Երգ. «Տերն Ինձ մի Տաճար Պարգևեց»
(*CS*, 153)

«Չգիտե՞ք որ դուք Աստծո տաճար եք և Աստծո Հոգին բնակվում է ձեզանում: . . . Աստծո տաճարը սուրբ է՝ որ դուք եք» (Ա Կորնթացիս Գ.16-17):

Այստեղ տրված մտքերին ավելացրեք ձեր մտքերը: Պլանավորեք, թե ինչպես կարող եք երեխաներին ներկայացնել վարդապետությունը և օգնել նրանց հասկանալ և կիրառել այն իրենց կյանքում: Հարցրեք ինքներդ ձեզ. «Ի՞նչ պետք է անեն երեխաները, որպեսզի սովորեն, և ինչպե՞ս կարող եմ ես օգնել նրանց զգալ Հոգին»:

Պատճեններ. *Եթե դուք չունեք պատճենահանող մեքենա, դուք կարող եք նկարների վրա դնել մի մաքուր թուղթ և տպել դրանք կամ կարող եք դրանք տպել LDS.org-ից:*

Վարժությունները հարմարեցրեք *ձեր Երեխաների խմբի կարիքներին (տես* ՈՒՉԱՄԿ, *110-17): Օրինակ, դուք կարող եք շաբաթ 2-ի երկրորդ վարժությունը հարմարեցնել ավելի մեծ Երեխաների խմբի համար՝ խնդրելով յուրաքանչյուր երեխայի գրել կամ նկարել մի միտք թղթի մի փոքր կտորի վրա: Այնուհետև բոլոր թերթիկները ամրացրեք պատառոներին:*

Շաբաթ 1. Իմ մարմինը տաճար է:

Ներկայացրեք վարդապետությունը *(քննարկել տաճարները).* Նախքան Երեխաների խմբի դասի սկսվելը գրատախտակին գրեք «Դուք Աստծո տաճար եք» (Ա Կորնթացիս Գ.16) ձևակերպումը: Երեխաներին ցույց տվեք տաճարների նկարներ և հարցրեք, թե ինչն է տաճարը դարձնում այդքան յուրահատուկ (այն Տիրոջ տունն է, մաքուր, լավ խնամված և մի վայր, որտեղ Սուրբ Հոգին կարող է գալ): Պատասխանները գրեք գրատախտակին: Բացատրեք, որ մեր մարմինները տաճարների պես սուրբ են և թե՛ մենք, թե՛ ուրիշները պետք է հարգանքով վերաբերվեն դրան:

Օգնեք հասկանալ և կիրառել *(պատասխանել հարցերին և ներկել).* Պատճենահանեք մանկամսուրային ծրագրի 47 էջի նկարը, *Նայեք Ձեր Փոքրիկներին*: Կտրեք նկարի շրջանները և դրանք դրեք տարայի մեջ: Երեխաներից մեկին խնդրեք ընտրել շրջաններից մեկը: Հարցրեք երեխաներին, թե ինչպես է նկարը նրանց հիշեցնում վերաբերվել իրենց մարմիններին ինչպես տաճարների: Երեխաներից յուրաքանչյուրին տվեք նկարի մեկական օրինակ և հրավիրեք նրանց գունավորել այն: Մեծ երեխաներին խնդրեք յուրաքանչյուր շրջանի տակ մի բան գրել, որը նրանք այս շաբաթ կանեն, որպեսզի վերաբերվեն իրենց մարմիններին ինչպես տաճարների: Հրավիրեք երեխաներին իրենց նկարները տուն տանել և սովորեցնել իրենց ընտանիքներին, թե ինչպես կարող են նրանք վերաբերվել իրենց մարմիններին ինչպես տաճարների:



Օգնեք կիրառել *(քննարկել ավետարանի չափանիշները).* Ցուցադրեք «Իմ Ավետարանի Չափանիշների» մի օրինակ: Հարցրեք երեխաներին, թե ավետարանի չափանիշներից որոնք են նրանց սովորեցնում վերաբերվել իրենց մարմիններին ինչպես տաճարների: Հրավիրեք երեխաներին շրջվել դեպի իրենց մոտ նստած որևէ մեկը և կիսվել իրենց մարմիններին որպես տաճարի վերաբերվելու ճանապարհներից մեկով: Այնուհետև խնդրեք նրանց մտածել, թե ինչում կարող են նրանք կատարելագործվել: Հրավիրեք մի քանի երեխաների կիսվել իրենց մտքերով բոլորի հետ:

Սեղմեք այստեղ պաստառի և մանկամսուրի ծրագրի էջի համար:

Շաբաթ 2. Համեստ հագնվելը հարգանք է ցուցաբերում Երկնային Հոր և իմ անձի հանդեպ:

Ներկայացրեք վարդապետությունը *(կարդալ սուրբ գրություններ և ավետարանի չափանիշները).* Խնդրեք երեխաներին բացել Ա Կորնթացիս Գ.16 և միասին բարձրաձայն կարդալ այն: Ասեք երեխաներին, որ մեր մարմիններին որպես տաճարների վերաբերելու ճանապարհներից մեկը համեստ հագնվելն է: Ցուցադրեք «Իմ Ավետարանի Չափանիշները» և թող երեխաները բարձրաձայն կարդան այն չափանիշը, որն ասում է. «Ես համեստ կհագնվեմ՝ հարգանք ցուցաբերելով Երկնային Հոր և ինքս իմ հանդեպ»:

Օգնեք հասկանալ *(քննարկել համեստ լինելը և նկարներ ցուցադրել).* Քննարկեք, թե ինչ է նշանակում պարկեշտ հագնվել (տես «Հագուստ և արտաքին տեսք» բաժինը *Երիտասարդներին զորացնելու համար*

գրքույկից)։ Պատրաստեք մի քանի ազդագրեր, որոնց վերևում գրված կլինի. «Ես պարկեշտ կհագնվեմ . . .»։ Երեխաներին խմբերի բաժանեք և խնդրեք յուրաքանչյուր խմբի ազդագրերից մեկի վրա գրել պարկեշտ հագնվելու իրենց խոստումը կամ նկարեն իրենք իրենց՝ պարկեշտ հագուստով։ Ցուցադրեք ազդագրերը Երեխաների խմբի սենյակում։



Նկարներ կարող եք գտնել sharingtime.lds.org կայքում

Շաբաթ 3. Իմաստության Խոսքով ապրելը ցույց է տալիս հարգանք մարմնի նկատմամբ։

Օգնեք հասկանալ *(կարդալ սուրբ գրություններ).* Գրատախտակի մի կողմում գրեք «Պատվիրաններ» և հետևյալ սուրբ գրությունների հղումները. ՎԱՈՒ 89.7-9,12,14,16։ Մյուս կողմում գրեք «Խոստումներ» և հետևյալ հղումը. ՎԱՈՒ 89.18-21։ Թող երեխաների կեսը կարդան սուրբ գրությունների առաջին մասը և գտնեն պատվիրաններ, որոնք Տերը տվել է մեզ Իմաստության Խոսքում։ Թող մյուս երեխաները կարդան մնացած սուրբ գրությունները և գտնեն օրհնությունները, որոնք Նա խոստացել է մեզ, եթե մենք հնազանդվենք։ Քննարկեք՝ ինչ են նշանակում պատվիրանները և օրհնությունները։

Իմաստության Խոսք	
Պատվիրաններ	Խոստումներ
ՎԱՈՒ 89.7-9, 12, 14, 16	ՎԱՈՒ 89.18-21

Օգնեք կիրառել *(խաղ խաղալ).* Հրավիրեք մի երեխայի ասել. «Ես կապրեմ Իմաստության Խոսքով» _____ և լրացնել բացթողումը ինչ-որ բանով, որ նա կանի Իմաստության Խոսքով ապրելու համար։ Այնուհետև հրավիրեք մեկ այլ երեխայի կրկնել արտահայտությունը և առաջին երեխայի պատասխանը և այնուհետև ավելացնել իր սեփական պատասխանը։ Խնդրեք երրորդ երեխային կրկնել արտահայտությունը և նախորդ երկու երեխաների պատասխանները և այնուհետև ավելացնել մեկ այլ պատասխան։ Եթե ժամանակը թույլ է տալիս՝ կրկնեք, և ամեն երեխա թող մի պատասխան ավելացնի։

Լավ բաներ կարդալը, դիտելը և լսելը իմ միտքը մաքուր են պահում։

Ներկայացրեք վարդապետությունը *(առարկայական դասի դիտում).* Երեխաներին ցույց տվեք երկու բաժակ, մեկը պղտոր ջրով և մյուսը մաքուր ջրով։ Հարցրեք, թե դրանցից որը նրանք կնախընտրեն խմել և ինչու։ Ասեք երեխաներին, որ մեր մտքերը բաժակների նման են և որ մենք պետք է դրանց մեջ դնենք միայն մաքուր և լավ բաներ։ Գրատախտակին գրեք հետևյալ նախադասությունը և թող երեխաները այն ասեն ձեզ հետ. «Լավ բաներ կարդալը, դիտելը և լսելը իմ միտքը մաքուր են պահում»։ Երեխաներին սովորեցրեք ձեռքի հասարակ շարժումներ, որոնք կօգնեն նրանց հիշել նախադասությունը։ Օրինակ, *կարդալ բառի համար* ձեր ձեռքերը առաջ պահեք, ասես թե դուք գիրք եք բռնել. *դիտել բառի համար* ցույց տվեք ձեր աչքը. *լսելու համար* ափերի մեջ առեք ձեր ականջները. և *մտքի համար* ցույց տվեք ձեր ճակատը։ Մի քանի անգամ կրկնեք նախադասությունը՝ գործողությունները փոխարինելով բառերով։

Օգնեք հասկանալ *(խաղ խաղալ և երգ երգել).* Երեխաներին ցույց տվեք Հիսուս Քրիստոսի նկարը երեխաների հետ և նրանց խնդրեք մի քանի վայրկյան նայել դրան։ Ծածկեք նկարը և խնդրեք նրանց ասել ձեզ, թե ինչ մանրամասներ են նրանք հիշում դրա մասին։ Օգնեք երեխաներին հասկանալ, որ մենք հիշում ենք այն, ինչ տեսնում ենք։ Բացատրեք, որ երբ մենք լցնում ենք մեր մտքերը լավ բաներով, մենք նաև մտածում ենք լավ բաներ։ Նկարը նորից ցուցադրեք և թող երեխաները երգեն «Ես Զգում Եմ Իմ Փրկչի Սերը» (*CS,* 74–75)։ Խնդրեք երեխաներին կիսվել, թե երգը նրանց ինչ զգացողություններ է տալիս։ Բացատրեք, որ լավ երաժշտություն լսելը օգնում է մեզ զգալ Հոգին և մեր մտքերը մաքուր է պահում։

Երեխաների սովորելն ավելի արդյունավետ կլինի, եթե ուսուցման տարբեր եղանակներ կիրառվեն։ Օրինակ, շաբաթ 4-ում երեխաներին վարդապետությունը ներկայացվում է առարկայական դասի միջոցով և այնուհետև նրանք խրախուսվում են օգտագործել ձեռքի հասարակ շարժումներ՝ օգնելով նրանց հիշել։

Սեպտեմբեր

Ավետարանը կքարոզվի ամբողջ աշխարհում

«Այս ավետարանը պիտի քարոզվի ամեն ազգի և ցեղի և լեզվի և ժողովրդի» (ՎԱՌՈՒ 133.37):

Այստեղ տրված մտքերին ավելացրեք ձեր մտքերը: Պլանավորեք, թե ինչպես կարող եք երեխաներին ներկայացնել վարդապետությունը և օգնել նրանց հասկանալ և կիրառել այն իրենց կյանքում: Հարցրեք ինքներդ ձեզ. «Ի՞նչ պետք է անեն երեխաները, որպեսզի սովորեն, և ինչպե՞ս կարող եմ ես օգնել նրանց զգալ Հոգին»:

Նկարել. *Շաբաթ 1-ի քարտեզը կարող է նկարված, պատճենահանված կամ տնից բերված լինել: Եթե դուք նախատեսում եք նկարել գրատախտակին, նախապես փորձեք ձեր նկարելը: Ներողություն մի խնդրեք ձեր նկարչական ունակության համար: Ներողություն խնդրելը միայն կշեղի ուշադրությունը դեպի նկարելու առանձնակի կողմերը: Եթե ձեզ մոտ լավ չի ստացվում, խնդրեք մեկին օգնել (տես ՈՒՉԱՄԿ, 162-63):*

Սեր ցուցաբերեք. *Առիթներ փնտրեք ձեր սերը երեխաներին ցուցադրելու համար: Երբ դուք սեր եք ցուցաբերում նրանց հանդեպ, ում դուք սովորեցնում եք, նրանք ավելի դյուրըմբռնող են դառնում Հոգու նկատմամբ և ավելի խանդավառ՝ սովորելու նկատմամբ (տես ՈՒՉԱՄԿ, 31):*

Շաբաթ 1. Սուրբ գրությունները սովորեցնում են, որ ավետարանը պետք է քարոզվի ամբողջ աշխարհում:

Ներկայացրեք վարդապետությունը *(կարդալ սուրբ գրություն).* Ավագ երեխաներից մեկին հրավիրեք բարձրաձայն կարդալ Վարդապետություն և Ուխտեր 133.37: Ասեք երեխաներին, որ միսիոներները սովորեցնում են ավետարանը աշխարհի տարբեր վայրերում, տարբեր լեզուներով: Թող երեխաները միասին կրկնեն սուրբ գրությունը:

Օգնեք հասկանալ *(քննարկել միսիաները).* Երեխաներին ցույց տվեք աշխարհի քարտեզը կամ գրատախտակին նկարեք մի հասարակ քարտեզ: Խնդրեք նրանց կիսվել տարածքներով, որտեղ իրենց իմացած մարդիկ միսիա են ծառայել: Քարտեզի վրա նշեք այդ վայրերը: Հրավիրեք երեխաներին կիսվելու, թե որտեղ կուզեն նրանք ծառայել և թույլ տվեք նրանց նշել այդ տեղերը քարտեզի վրա: Բացատրեք, որ միսիայի կանչերը գալիս են Տիրոջ կողմից՝ մարգարեի միջոցով, և որ միսիոներները ծառայում են որտեղ էլ որ Տերը կանչում է: Օգնեք երեխաներին վարժվել Եկեղեցու անունը մի քանի տարբեր լեզուներով ասելում: Քննարկեք երեխաների հետ, որ կան մի քանի վայրեր, որտեղ միսիոներները սովորեցնելու թույլտվություն դեռևս չունեն: Բացատրեք, որ Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնը խնդրել է մեզ «աղոթել այդ տարածքների բացման համար, որ մենք կարողանանք [բոլորի] հետ կիսել ավետարանի ուրախությունը» (Համաժողովի զեկույցում, Հոկտեմբեր 2008, 4, կամ *Ensign*, Nov. 2008, 6):

Օգնեք կիրառել *(գրել միսիոներներին).* Հրավիրեք երեխաներին երկտող գրել ձեր ճյուղից միսիա ծառայող մեկին կամ ձեր ճյուղի միսիոներներին: Նամակները տվեք ճյուղի միսիոներների ղեկավարին՝ միսիոներներին ուղարկելու համար:

Այս վարժությունում միայն մի քանի երեխա առաջ կգան: Որպեսզի բոլոր երեխաները մասնակցելու հնարավորություն ունենան, հրավիրեք նրանց շշնջալ իրենց հարևանին, թե որտեղ նրանք կուզեն ծառայել:

Սեղմեք այստեղ քարտեզի համար:

Շաբաթ 2. Միսիոներական աշխատանքը օրհնում է բոլորին:

Օգնեք հասկանալ *(լսել հյուր խոսնակների).* Հրավիրեք վերադարձած միսիոների զալ Երեխաների խումբ և պատմել երեխաներին որոշ օրհնությունների մասին, որ նա ստացել է միսիոներական աշխատանք կատարելով: Հրավիրեք ուրիշների (նորադարձների, երեխաների կամ ընտանիքների) կիսվել իրենց ունեցած միսիոներական փորձառությամբ կամ օրինակով, թե ինչպես է միսիոներական աշխատանքը օրհնել իրենց կյանքը: Հրավիրեք երեխաներին հյուրերի համար երգել «Մենք կբերենք Նրա Ճշմարտությունը Աշխարհին» (*CS*, 172–73):

Շաբաթ 3. Ես կարող եմ հիմա պատրաստվել միսիա ծառայելուն:

Օգնեք հասկանալ *(կարդալ սուրբ գրություններ).* Ցուցադրեք Ամմոնի նկարը և ասեք երեխաներին, որ նա հրաշալի միսիոներ էր և սովորեցրել էր ավետարանը Լամանացիներին: Բացատրեք, որ նա պատրաստվել էր ծառայել որպես միսիոներ մինչև իր միսիայի գնալը: Բարձրաձայն կարդացեք (կամ խնդրեք ավագ երեխաներից մեկին կարդալ) Ալմա 17.2-3: Խնդրեք ավագ երեխաներից մեկին լսել և ձեռք բարձրացնել, երբ նրանք լսեն ուղիներ, որոնցով Ամմոնը պատրաստվում էր միսիոներ լինել: Խնդրեք երեխաներից մեկին գրատախտակին գրել նրանց պատասխանները: Ասեք երեխաներին, որ նրանք կարող են անել այս նույն բաները մինչ պատրաստվում են լինել միսիոներներ: Երգեք *"I Hope They Call Me on a Mission"* (*CS,* 169): Մինչ նրանք երգում են հրավիրեք երեխաներին մնջախաղի տեսքով ներկայացնել հասարակ գործողություններ, որ միսիոներները կարող են անել, ինչպես օրինակ՝ թակել դռները, կարդալ սուրբ գրությունները կամ հեծանիվ վարել:

Օգնեք կիրառել *(պատրաստվել միսիայի համար).* Ասեք երեխաներին, որ կան բաներ, որոնք նրանք կարող են անել հիմա, որ պատրաստվեն լինել միսիոներներ, ինչպես օրինակ՝ ուսումնասիրել սուրբ գրությունները, վկայություն ձեռք բերել, պատվիրանները պահել, տասանորդ վճարել և գումար խնայել: Յուրաքանչյուր երեխայի տվեք տասանորդի թերթիկ և ցույց տվեք նրանց ինչպես այն լրացնել: Օգնեք երեխաներին հատուկ տեղ պատրաստել, որտեղ նրանք կարող են դնել իրենց տասանորդի գումարը և իրենց միսիայի համար խնայվող գումարը: Այն կարող է լինել մի տուփ, փոքր տարա կամ թիթեղյա տուփ, կամ մի ծրար՝ տասանորդի և խնայողությունների համար առանձին տեղերով:

Նկարներ կարող եք գտնել sharingtime.lds.org կայքում

Դասերը հարմարեցրեք *երեխաների տարիքին (տես* ՈՒՉԱՄԿ, *110-17): Օրինակ, շաբաթ 4-ի երկրորդ վարժությունում դուք կարող է ցանկանաք տալ ամեն ավագ երեխայի Մորմոնի Գրքի մի օրինակ և խրախուսեք նրանց տալ այն ինչ որ մեկին: Որպեսզի օգնեք կրտսեր երեխաներին վերանայել Առաջին Տեսիլքի պատմությունը, դուք կարող եք օգտագործել վարժություններ, զննական պարագաներ և տիկնիկներ՝ էջ 88-91* Նայեք Ձեր Փոքրիկներին *գրքից:*

Երեխային գրատախտակի վրա գրելու հրավիրելը կօգնի իրեն օգտակար զգալ: Դա նաև կօգնի գրավել մնացած երեխաների ուշադրությունը:

Շաբաթ 4. Ես կարող եմ միսիոներ լինել այժմ:

Օգնեք հասկանալ *(կիսել մտքեր).* Գրատախտակին գրեք հետևյալ նախադասությունը. «Ես կարող եմ լինել միսիոներ հիմա _____»: Հրավիրեք երեխաներին մտածել բաներ, որ նրանք կարող են անել այժմ միսիոներ լինելու համար: Թող նրանք կիսեն իրենց մտքերը իրենց կողքի նստողի հետ: Հրավիրեք մի քանի երեխաների գրատախտակին գրել իրենց պատասխանները:

Օգնեք հասկանալ *(լսել վկայություններ).* Հրավիրեք ավագ երեխայի պատմել Առաջին Տեսիլքը և հրավիրեք մեկ ուրիշ երեխայի կիսել իր զգացմունքները Մորմոնի գրքի մասին: (Նախօրոք խնդրեք երեխաներին, որպեսզի նրանք պատրաստվելու շատ ժամանակ ունենան): Խրախուսեք բոլոր երեխաներին իրենց ընտանիքների հետ կիսվել Առաջին Տեսիլքի պատմությամբ կամ իրենց զգացմունքներով Մորմոնի Գրքի մասին:

Օգնեք կիրառել *(երգ երգել).* Խնդրեք երեխաներին մտածել մի գործողություն, որը ցույց է տալիս, թե ինչպես մենք կարող ենք լինել միսիոներներ և ապրել ավետարանով այժմ: Ընտրեք մի երեխա, որ գա դասարանի առաջ և կիսվի իր գործողությամբ մնացած երեխաների խմբի հետ: Հրավիրեք երեխաներին անել գործողությունը մինչ նրանք երգում են *"Do As I'm Doing"* (*CS,* 276): Եթե ժամանակը թույլ է տալիս, նույնը կրկնեք մյուս երեխաների հետ ևս:

Հոկտեմբեր

Աղոթքը ակնածալից հաղորդակցություն է Աստծո ու իմ միջև

«Եթե մեկը ձեզանից իմաստության պակասություն ունի թող խնդրէ Աստուածանից, որ ամենին տալիս է առատությամբ և չէ նախատում, և կտրուի նորան» (Հակոբոս Ա.5):

Այստեղ տրված մտքերին ավելացրեք ձեր մտքերը: Պլանավորեք, թե ինչպես կարող եք երեխաներին ներկայացնել վարդապետությունը և օգնել նրանց հասկանալ և կիրառել այն իրենց կյանքում: Հարցրեք ինքներդ ձեզ. «Ի՞նչ պետք է անեն երեխաները, որպեսզի սովորեն, և ինչպե՞ս կարող եմ ես օգնել նրանց զգալ Հոգին»:



Նախապատրաստություն. *Երբ դուք ծրագրում եք ձեր միացյալ ժամերը, առաջինը կարդացեք ամսվա բոլոր դասերը: Այնուհետև համաձայնեցրեք վարժությունները, որոնք դուք ծրագրում եք օգտագործել ձեր ժամանակի ու ձեր Երեխաների խմբի կարիքներին համապատասխան: Օրինակ, դուք կարող եք մի շաբաթ կատարել երկար վարժության կետը և ավարտել այն հաջորդ շաբաթ, կամ կրկնել կարճ վարժությունները՝ օգնելով երեխաներին վերհիշել: (Տես* ՈՒՉԱՄԿ, *98-99:)*

Շաբաթ 1. Ես կարող եմ աղոթել Երկնային Հորը:

Ներկայացրեք վարդապետությունը *(առարկայական դասի դիտում).* Խնդրեք մի ծնողի ու երեխայի կանգնել երեխաների առջև: Երեխային հրավիրեք հարց տալ իր ծնողին: Այնուհետև խնդրեք ծնողին հեռանալ սենյակից և փակել դուռը: Հարցրեք երեխաներին, թե ինչպես նրանք կարող են հաղորդակցվել իրենց ծնողների հետ, երբ նրանք նրանց հետ չեն (օրինակ՝ նամակ գրել կամ հեռախոսով խոսել): Բացատրեք, որ Աստված մեր Հայրն է և մենք Նրա երեխաներն ենք: Որովհետև մենք Նրա ներկայության մեջ չենք, Նա մեզ Իր հետ խոսելու հնար է տվել: Հարցրեք երեխաներին, արդյոք նրանք գիտեն, թե մենք ինչպես ենք խոսում Աստծո հետ: Թող երեխաները ձեր հետևից կրկնեն. «Ես կարող եմ աղոթել Երկնային Հորը»:

Օգնեք հասկանալ *(զունավորել).* Երգեք *"I Pray in Faith"* (*CS,* 14): Յուրաքանչյուր երեխայի համար պատճենահանեք *Նայեք Ձեր Փոքրիկներին* մանկամսուրային ծրագրի 19 էջի բացիկը: Երեխաներին հրավիրեք գունավորել նկարները: (Ավագ երեխաները կարող են բացիկների վրա գրել որոշ բաներ, ինչի համար նրանք երախտապարտ են և որոշ բաներ, որ կարող են խնդրել Երկնային Հորից: Այնուհետև դուք կարող եք հրավիրել նրանց կիսել իրենց մտքերը ամբողջ Երեխաների Խմբի հետ): Թող երեխաները կրկին երգեն երգը, մինչ վերանայում են իրենց բացիկները:

Սեղմեք այստեղ բացիկի համար:

Նախատեսեք այնպիսի վարժություններ, որոնք ներգրավում են երեխաներին բազում ճանապարհներով՝ մեծացնելով հասկացողությունն ու կիրառումը: Օրինակ, այս վարժությունում երեխաները տեսնում, երգում, զունավորում, գրում, լսում և կիսվում են:

Շաբաթ 2. Սուրբ գրությունները սովորեցնում են ինձ ինչպես և երբ աղոթել:

Ներկայացրեք վարդապետությունը *(անգիր սովորել սուրբ գրություն).* Օգնեք երեխաներին անգիր սովորել հետևյալ նախադասությունը Ալմա 13.28-ից. «Խոնարհեցնեք ձեզ Տիրոջ առաջ, և կանչեք նրա սուրբ անունը, և արթուն կենաք ու շարունակ աղոթեք»: Քննարկեք, թե ինչ է սովորեցնում սուրբ գրությունը. ինչպես և երբ մենք պետք է աղոթենք:

Օգնեք հասկանալ *(կարդալ սուրբ գրությունները և լսել պատմություն սուրբ գրություններից).* Օգնեք երեխաներին հասկանալ, որ մենք կարող ենք մեր սրտերում աղոթել Երկնային Հորը ցանկացած ժամանակ, ցանկացած վայրում և որ մենք պետք է շնորհակալ լինենք նրան մեր օրհնությունների համար և խնդրենք Նրան, որ օգնի մեզ: Սուրբ գրությունների հետևյալ հղումները գրեք գրատախտակին. 3 Նեփի 18.19, 3 Նեփի 19.6-8, 3 Նեփի 18.15: Նաև գրատախտակին գրեք *ինչպես* և *երբ* բառերը: Հրավիրեք երեխաներին կարդալ յուրաքանչյուր սուրբ գրությունը և քննարկել, թե ինչ է այն մեզ սովորեցնում այն մասին, թե ինչպես կամ երբ մենք պետք է աղոթենք: Պատմեք, ինչպես էին Ալման ու Ամուղեկը սովորեցնում են Զորամացիներին ինչպես աղոթել (տես Ալմա 31, 34.17-27, տես նաև *Երեխաների Միություն 4,* դաս 21): Դուք կարող եք խնդրել մի քանի երեխաների վերակերպավորել պատմության դեպքերը՝ մինչ դուք այն պատմում եք:

Օգնեք կիրառել *(կիսվել զգացմունքներով և երգել երգեր).* Հրավիրեք մի քանի երեխաների կիսվել, թե ինչպես են իրենց զգում, երբ աղոթում են: Խնդրեք երեխաներին առաջարկել մի քանի Երեխաների Խմբի երգեր, որ սովորեցնում են աղոթքի մասին: Երգեք երգերից մի քանիսը և հրավիրեք երեխաներին առաջարկել հասարակ շարժումներ՝ յուրաքանչյուր երգում մեկ կամ երկու բառեր փոխարինելու համար: Օրինակ, «աղոթք» կամ «աղոթել» բառերը երգելու փոխարեն նրանք կարող են ծալել իրենց ձեռքերը:

Համարեցրեք դասերը *երեխաների կուրիկներին և սովորելու կարողություններին (տես ՈՒՉԱՄԿ, 110-17): Օրինակ, շաբաթ 2-ում կրտսեր երեխաները ամբողջ սուրբ գրության փոխարեն կարող են անգիր սովորել «Արթուն կենաք ու շարունակ աղոթեք» արտահայտությունը:*

Շաբաթ 3 և 4. Երկնային Հայրը լսում ու պատասխանում է իմ աղոթքներին:

Ներկայացրեք վարդապետությունը *(կարդալ սուրբ գրություններ).* Թող երեխաները կարդան 3 Նեփի 14.7 և Հակոբոս Ա.5: Հրավիրեք երեխաներին գտնել, թե ինչ են սուրբ գրությունները սովորեցնում աղոթքի մասին: Միասին բարձրաձայն կարդացեք սուրբ գրությունները, և թող երեխաները կիսվեն իրենց սովորածով: Հրավիրեք երեխաներին ձեր հետ միասին ասել՝ «Երկնային Հայրը լսում ու պատասխանում է իմ աղոթքներին»:

Օգնեք հասկանալ և կիրառել *(պատմություններ լսել).* Երեխաներին խմբերի բաժանեք, և թող նրանք հերթով այցելեն հետևյալ կայարանները (տես*ՈՒՉԱՄԿ,* 179): Յուրաքանչյուր կայարանում թող ուսուցիչը բացատրի ճանապարհներից մեկը, որով Երկնային Հայրը պատասխանում է մեր աղոթքներին և թույլ տա երեխաներին պատմել, թե ինչպես են իրենք ստացել իրենց աղոթքների պատասխանները: Դուք կարող եք նախատեսել երկու կայարան մի շաբաթվա համար և մյուս երկու կայարանները՝ հաջորդ շաբաթվա համար:

- Կայարան 1. Երբեմն աղոթքները պատասխանվում են մտքերով կամ զաղափարներով, որ կարող են գալ մեր մտքերին ու սրտերին (տես ՎԱՈՒ 8.2): Կիսվեք փորձառությամբ, երբ այդ պատահել է ձեր կյանքում, կամ պատմեք Ենովսի պատմությունը (տես Ենովս 1.4-5, 10, տես նաև *Նայեք Ձեր Փոքրիկներին,*17):
- Կայարան 2. Երկնային Հայրը կարող է օգտագործել ուրիշներին՝ աղոթքներին պատասխանելու համար: Կիսվեք փորձառությամբ, երբ մեկ ուրիշը պատասխանել է ձեր աղոթքներին, կամ պատմեք Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնի պատմությունը Բեն և Էմիլի Ֆուլմերների աղոթքին պատասխանելու մասին (տես Համաժողովի զեկույց, հոկտեմբեր 2003, 63, կամ *Ensign,* Nov. 2003, 58–59):
- Կայարան 3. Աղոթքի պատասխանները կարող են գալ Քրիստոսի խոսքերից, որոնք գտնվում են սուրբ գրություններում (տես 2 Նեփի 32.3): Կիսվեք փորձառությամբ, երբ ձեր աղոթքը պատասխանվել է՝ երբ դուք կարդացել եք ձեր սուրբ գրությունները:
- Կայարան 4. Աղոթքի պատասխանները կարող են գալ վերջին օրերի մարգարեների միջոցով (տես ՎԱՈՒ 1.38): Երեխաներին ցույց տվեք *Ensign* կամ *Ընկերը,* և ասեք նրանց, որ նրանք կարող են մարգարեների ուսմունքները գտնել Եկեղեցու ամսագրերում: Կիսվեք փորձառությամբ, երբ ձեր աղոթքը պատասխանվել է՝ մինչ դուք լսել եք գերագույն համաժողովը կամ կարդացել եք վերջին օրերի մարգարեների խոսքերը:

Կայարանները վայրեր են, որտեղ երեխաների փոքր խմբերը մասնակցում են բազմազան ուսուցանող փորձառությունների (տես ՈՒՉԱՄԿ, 179): Մեծ Երեխաների Խմբում կայարանները կարող են այնքան պարզ լինել, որքան երեխաների խմբերի միջև ուսուցչուհու տեղափոխվելը:

Նոյեմբեր

Ակնածանքը սեր ու հարգանք է Աստծո հանդեպ

«Միրիր քո Տեր Աստծուն քո բոլոր սրտովը, քո բոլոր անձովը և քո բոլոր մտքովը» (Մատթեոս ԻԲ.37):

Այստեղ տրված մտքերին ավելացրեք ձեր մտքերը: Պլանավորեք, թե ինչպես կարող եք երեխաներին ներկայացնել վարդապետությունը և օգնել նրանց հասկանալ և կիրառել այն իրենց կյանքում: Հարցրեք ինքներդ ձեզ. «Ի՞նչ պետք է անեն երեխաները, որպեսզի սովորեն, և ինչպե՞ս կարող եմ ես օգնել նրանց զգալ Հոգին»:

Վերանայում. *Վարդապետությունը ֆիզիկական գործողության կամ ցուցադրական նյութի հետ կապելը երեխաներին կօգնի հիշել այն (տես* ՈՒՉԱՄԿ, *182-83): Շաբաթ 1-ի երկրորդ վարժությունը երեխաներին օգնում է հիշել, որ ակնածանքը կապված է Աստծո հանդեպ սիրո հետ, որովհետև հրավիրում է նրանց դնել իրենց ձեռքը իրենց սրտին: Նկատի ունեցեք վերանայել այս վարդապետությունը մի քանի ամիսների ընթացքում, դնելով ձեր ձեռքը ձեր սրտին, երբ դուք խրախուսեք ակնածանք:*

Շաբաթ 1. Ակնածանքը սեր ու հարգանք է Աստծո հանդեպ:

Ներկայացրեք վարդապետությունը *(նկար նայել ու խաղ խաղալ).* Ցուցադրեք աղոթող երեխայի նկար, և բացատրեք, որ երեխան սեր ու հարգանք է ցուցաբերում Աստծո նկատմամբ: Ասեք երեխաներին, որ դուք մտածում եք ութ տառանոց բառի մասին, որը նշանակում է սեր ու հարգանք Աստծո հանդեպ: Գրատախտակին նկարեք ութ դատարկ վանդակներ, *ակնածանք բառի յուրաքանչյուր տառի համար առանձին-առանձին,* և հրավիրեք երեխաներին տառեր գուշակել: Երբ նրանք գուշակեն ճիշտ տառ, գրեք դրանք համապատասխան վանդակում: Եթե ցանկանում եք, ավագ երեխաներից մեկը կարող է ձեզ օգնել: Կրտսեր երեխաների համար նկար ցույց տվեք և հարցրեք նրանց, թե ինչից են իմանում, որ երեխան ակնածանք ունի: Թող երեխաները միասին ասեն. «Ակնածանքը սեր և հարգանք է Աստծո հանդեպ»:

Օգնեք հասկանալ *(կարդալ սուրբ գրություն և երգ երգել).* Խնդրեք երեխաներին բացել սուրբ գրությունները և կարդալ Հովհաննես ԺԴ.15: (Եթե երեխաները անցյալ տարի անգիր էին սովորել այս հղումը, կարող եք խնդրել նրանց անգիր ասել): Հարցրեք երեխաներին, թե ինչպես ենք մենք ցույց տալիս մեր սերը Հիսուս Քրիստոսի հանդեպ: Երգեք «Ակնածանքը սեր է» (*CS,* 31): Խնդրեք երեխաներին «ակնածանք» կամ «ակնածալից» բառերը ամեն անգամ լսելիս դնել իրենց ձեռքը իրենց սրտին:

Օգնեք կիրառել *(քննարկել ակնածանքը).* Երեխաներին բաժանեք փոքր խմբերի, և թող նրանք քննարկեն, թե ինչ ճանապարհներով կարող են ակնածանք ցուցաբերել Երկնային Հոր ու Հիսուս Քրիստոսի հանդեպ հետևյալ իրավիճակներից մեկում, երբ նրանք եկեղեցում են, երբ նրանք աղոթում են, և երբ նրանք տանն են կամ ընկերների հետ: Կրտսեր երեխաները կարող են նկարներ նկարել այն բանի վերաբերյալ, ինչ կարող են անել: Թող մի քանի երեխա կիսեն իրենց մտքերը ամբողջ խմբի հետ: Խրախուսեք նրանց կիսվել իրենց մտքերով տանը՝ իրենց ընտանիքների հետ:

Շաբաթ 2. Ակնածանքը հաղորդության ընթացքում օգնում է ինձ հիշել Հիսուս Քրիստոսին:

Օգնեք հասկանալ և կիրառել *(սովորել հաղորդության մասին).* Հրավիրեք եպիսկոպոսին կամ ճյուղի նախագահին և մի քանի Ահարոնյան Քահանայություն ունեցողների սովորեցնել երեխաներին հաղորդության մասին: Եթե հնարավոր է, դուք կարող եք խնդրել նրանց երեխաներին տանել հաղորդության սենյակ և սովորեցնել նրանց, թե ինչ է հաղորդությունը խորհրդանշում և նրանց ցույց տալ հաղորդության սեղանը, վայրը, որտեղ նրանք ծնկի են գալիս աղոթքն ասելու համար, և ծածկոցը, որն օգտագործում են հաղորդությունը ծածկելու համար: Հրավիրեք Ահարոնյան Քահանայություն կրող մեկ այլ անձի բացատրել, թե ինչ է նա անում ժողովրդին ամեն շաբաթ հաղորդությունը բաժանելու համար և ինչու է սա սրբազան հնարավորություն: Հարցրեք երեխաներին, թե քահանայություն կրողները հաղորդությունը օրհնելիս ինչ են անում, որ ցույց է տալիս հարգանք Աստծո հանդեպ (ծնկի են գալիս աղոթելու, հաղորդությունը ծածկում են սպիտակ կտորով, հագնվում և խոսում են ակնածալից կերպով:)

Երբ Երեխաների խումբ եք հրավիրում հյուր խոսնակների, հիշեցրեք նրանց հասարակ ձևով ներկայացնել ուղերձը, որպեսզի երեխաները հասկանան: Բոլոր հյուր խոսնակները պետք է երաշխավորված լինեն եպիսկոպոսության կողմից:

Հրավիրեք երեխաներին կիսվել նրանով, ինչ կարող են անել հաղորդության բաժանման ընթացքում Հիսուս Քրիստոսի հանդեպ հարգանք ցույց տալու համար:

Նկարներ կարող եք գտնել sharingtime.lds.org կայքում

Շաբաթ 3. Ես կարող եմ ակնածանք ցուցաբերել սուրբ վայրերի ու բաների նկատմամբ:

Ներկայացրեք վարդապետությունը *(մասնակցել առարկայական դասի).* Գրատախտակին գրեք «Ես կարող եմ ակնածանք ցուցաբերել սուրբ վայրերի ու բաների նկատմամբ» և խնդրեք երեխաներից մեկին կարդալ այն Երեխաների ողջ խմբի համար: Խնդրեք երեխաներին փակել իրենց աչքերը և բարձրացնել իրենց ձեռքերը, եթե նրանք կարողանան լսել, երբ դուք ցած գցեք մետաղադրամ կամ կոճակ: Ասեք երեխաներին, որ եկեղեցու շենքը սրբավայր է և որ հանգիստ նստելը և ուշադիր լսելը մեր ակնածանքը ցույց տվող ճանապարհներից մեկն է: Հրավիրեք երեխաներին կիսվել մի քանի այլ բաներով, որ նրանք կարող են անել եկեղեցու շենքերում ակնածանք ցույց տալու համար:

Օգնեք հասկանալ *(լսել պատմություն սուրբ գրություններից).* Ցուցադրեք Մովսեսի ու վառվող մորենու նկարը և պատմեք Ելից Գ.1-10–ում գտնվող պատմությունը: Բարձրաձայն կարդացեք 5-րդ հատվածը և թող երեխաները լսեն, թե ինչու Տերն ասաց Մովսեսին հանել կոշիկները: Բացատրեք, որ կարիք չկա հանել մեր կոշիկները ակնածալից լինելու համար, բայց շատ բաներ կան, որ մենք կարող ենք անել սուրբ վայրերի ու բաների հանդեպ ակնածանք ցույց տալու համար:

Օգնեք կիրառել *(խաղ խաղալ).* Ցուցադրեք հետևյալ նկարներից մի քանիսը. տաճար կամ եկեղեցու շենք, տուն, ընտանիք, որևէ մեկին աղոթելիս, երեխա, սուրբ գրություններ, մի խումբ երեխաներ, Երեխաների խմբի դաս և հաղորդություն: Մի մեծ կտոր պահեք բոլոր նկարների դիմաց և մի նկար հանեք: Կտորը իջեցրեք և թող երեխաները ասեն, թե որ նկարն է բացակայում: Ցուցադրեք բացակայող նկարը և հրավիրեք երեխաներին կիսվել, թե ինչ ճանապարհով կարող են ցուցաբերել ակնածանք կամ հարգանք նկարի վայրի կամ եղածի նկատմամբ: Կրկնեք մյուս նկարներով:

Ի՞նչ պետք է անեն երեխաները սովորելու համար: Վարժություններին պատրաստվելիս այս հարցը տվեք, որը կօգնի երեխաներին մասնակցելով սովորել: Օրինակ, շաբաթ 3-ի երրորդ վարժությունը բոլոր երեխաներին մասնակցելու հնարավորություն է տալիս քննարկելով, նկարներ նայելով և մտքեր կիսելով:

Սովորեցրեք օրինակով, *թե ինչպես կարող եք ցուցաբերել սեր և հարգանք ուրիշների հանդեպ (տես ՈՒՉԱՄԿ, 18-19): Ծառայեք ձեր Երեխաների Խմբի ուսուցիչներին՝ օգնություն և աջակցություն առաջարկելով: Այնուհետև օգնեք երեխաներին տեսնել, թե ինչպես նրանք կարող են սիրել և օգնել միմյանց:*

Շաբաթ 4. Ակնածանքը Աստծո հանդեպ օգնում է ինձ հարգել ու սիրել ուրիշներին:

Օգնեք հասկանալ *(երգեր երգել).* Երգեք հետևյալ երգերը:

Ամեն երգից հետո քննարկեք դրանց ուղեկցող հարցերը:

- «Ակնածանքը սեր է» (*CS,* 31): Կրկնեք այն տողը, որ ասում է. «Երբ ես ակնածալից եմ,դա երևում է իմ բառերում ու իմ գործերում»: Հարցրեք. Որո՞նք են այն բառերը կամ արտահայտությունները, որ ակնածանք են ցույց տալիս Երկնային Հոր ու ուրիշների հանդեպ: Որո՞նք են այն բաները, որ հարգանք են ցուցաբերում ուրիշների հանդեպ:
- «Բարին ինձնից պիտ գա» (*CS,* 145): Հարցրեք. Որո՞նք են մեր ընկերների նկատմամբ բարի լինելու ճանապարհներից մի քանիսը:
- «Ես կքայլեմ Քեզ հետ» (*CS,* 140–41): Հարցրեք. Ովքե՞ր են այն մարդկանցից ոմանք, որ ունեն մեր բարության կարիքը: Ինչպե՞ս կարող ենք բարի լինել նրանց հանդեպ:

Դեկտեմբեր

Սուրբ գրությունները ինձ սովորեցնում են Փրկչի ծննդի ու Երկրորդ Գալստյան մասին

«Որովհետև մարդի Որդին գալու է իր Հոր փառքովն իր հրեշտակների հետ. և այն ժամանակ ամեն մեկին կհատուցանե նորա գործերի համեմատ» (Մատթեոս ԺԶ.27):

Այստեղ տրված մտքերին ավելացրեք ձեր մտքերը: Պլանավորեք, թե ինչպես կարող եք երեխաներին ներկայացնել վարդապետությունը և օգնել նրանց հասկանալ և կիրառել այն իրենց կյանքում: Հարցրեք ինքներդ ձեզ. «Ի՞նչ պետք է անեն երեխաները, որպեսզի սովորեն, և ինչպե՞ս կարող եմ ես օգնել նրանց զգալ Հոգին»:

Սուրբ գրություններ. *Անմիջապես սուրբ գրություններից կարդալը երեխաներին կարող է օգնել ընտելանալ սուրբ գրությունների լեզվին: Բարդ բառերն ու արտահայտություններն անպայման բացատրեք: (Տես* ՈՒՉԱՄԿ, *50-51:)*

Շաբաթ 1. Մարգարեները մարգարեացել էին Հիսուս Քրիստոսի ծննդի մասին:

Օգնեք հասկանալ *(կարդալ սուրբ գրությունները և դերերով խաղալ).* Երեխաներին բաժանեք հինգ խմբի: Յուրաքանչյուր խմբի տվեք հետևյալ սուրբ գրություններից մեկը և որոշ դեկորացիաներ կամ հասարակ թատերական հագուստ համապատասխան մարգարեին ներկայացնելու համար. Եսայիա Է.14, Թ.6 (Եսայիա), 1 Նեփի 11.14-21 (Նեփի), Մոսիա 3.5, 8 (Բենիամին թագավոր), Ալմա 7.9-10 (Ալմա), Հելաման 14.2-6 (Սամուել): Յուրաքանչյուր խմբի հրավիրեք կարդալ և քննարկել, թե ինչ է ասել մարգարեն Քրիստոսի ծննդի մասին: Թող ամեն խմբից մեկական երեխա օգտագործի դեկորացիաները կամ թատերական հագուստը՝ մարգարեին ներկայացնելու համար, և ասի մյուս երեխաներին, թե որ մարգարեին է ներկայացնում և կարդա կամ պատմի, թե ինչ է այդ մարգարեն ասել Քրիստոսի ծննդի մասին: Երգեք «Նա ուղարկեց Իր Որդուն» (*CS,* 34–35) կամ «Սամուելն ասաց Մանուկ Հիսուսի մասին» (*CS,* 36):

Շաբաթ 2. Հիսուս Քրիստոսը ծնվել էր:

Նկատառում. *Բեմականացումներում երեխաները չպիտի խաղան Փրկչի դերը՝ բացի սուրբ ծննդյան տեսարաններից:*

Օգնեք հասկանալ *(երգ երգել և նկարներ նկարել).* Միասին երգեք «Սուրբ Ծննդյան երգը» (*CS,* 52–53): Երեխաներին բաժանեք չորս խմբի և յուրաքանչյուր խմբի տվեք հետևյալ քառյակներից մեկը(2-5): Խնդրեք երեխաներին նկարել իրենց քառյակին համապատասխան նկարներ: Երգեք ամբողջ երգը և թող երեխաները բարձրացնեն իրենց նկարները, երբ նրանք երգեն երգի իրենց մասը:

Շաբաթ 3. Հիսուս Քրիստոսը մի օր կվերադառնա երկիր:

Ներկայացրեք վարդապետությունը *(դասավորել բառերը).* Հետևյալ արտահայտությունները գրեք փոքր բառաշերտերի վրա. *Քանզի, Մարդու Որդին, կգա, իր Հոր, փառքով:* (Բառաշերտեր կարող եք գտնել *sharingtime.lds.org* կայքում): Բառաշերտերը խառը դրեք գրատախտակին և հրավիրեք երեխաներին օգնել ձեզ դասավորել դրանք: (Եթե ցանկանում եք, կարող եք բառաշերտերը պատրաստել մի քանի օրինակից և երեխաներին թույլ տալ միասին աշխատել խմբերում): Երբ երեխաները արտահայտությունները դասավորեն ճիշտ կարգով, թող նրանք ստուգեն իրենց պատասխանները՝ կարդալով Մատթեոս ԺԶ.27:

Սեղմեք այստեղ բառաշերտերի համար:

Օգնեք հասկանալ *(նկարների դիտում).* Խնդրեք չորս երեխաների առաջ գալ և ցուցադրել Սամուել Լամանացու, Հիսուսի ծննդի, Հիսուսը ուսուցանելիս և Երկրորդ Գալուստի նկարները: Յուրաքանչյուր նկարը երեխաների հետ քննարկեք: Նկարները ցուցադրող երեխաներին խնդրեք անկանոն կարգով կանգնել: Հրավիրեք Երեխաների խմբին ասել երեխաներին ուր տեղափոխվել, որպեսզի նկարները լինեն ժամանակագրական կարգով:

Օգնեք կիրառել *(համընկումների խաղ).* Գրատախտակի մեջտեղից մի գիծ գծեք դեպի ներքև: Գրատախտակի վերևում գրեք «Հիսուս Քրիստոսը մի օր երկիր կվերադառնա»: Գրատախտակի մի կեսում գրեք հետևյալ հարցերը: Մյուս կեսի վրա գրեք սուրբ գրությունների հղումները անկանոն կարգով:

Նկարներ կարող եք գտնել sharingtime.lds.org կայքում

Նկարներ և այլ ցուցադրական այլ նյութեր օգտագործելը օգնում է երեխաներին սկզբունքը կամ վարդապետությունը իրենց մտքում կապել որևէ պատկերի հետ, որը մեծացնում է նրանց սովորածը հասկանալու և հիշելու կարողությունը:

- Ի՞նչ հրաշքներ տեղի կունենան, երբ Քրիստոսը կրկին գա: (Ջոզեֆ Սմիթ-Մատթեոս 1.33,36-37)
- Ե՞րբ Փրկիչը կրկին կգա: (Ջոզեֆ Սմիթ-Մատթեոս 1.38-40)
- Ինչու՞ մենք պետք է պատրաստվենք Երկրորդ Գալուստին: (ՎևՈւ 38.30)
- Որքա՞ն ժամանակ Փրկիչը կմնա երկրի վրա: (ՎևՈւ 29.11):

Երեխաներին խնդրեք աշխատել իրենց ուսուցչի հետ՝ համընկեցնելով հարցերը պատասխանների հետ: Միասին քննարկեք պատասխանները: (Տես նաև *Հավատարիմ Հավատքին* [2004], 159-61):

Հարցրեք երեխաներին, թե ինչպե՞ս նրանք կարող են պատրաստվել Երկրորդ Գալուստին:

Տարբեր տարիքային խմբեր. *Ձեր միացյալ ժամերն այնպես ծրագրեք, որ ներգրավեք և ավագ, և կրտսեր երեխաներին (տես* ՈՒՉԱՄԿ, *110-17): Օրինակ, շաբաթ 3-ի երկրորդ վարժությունը շատ մատչելի է կրտսեր երեխաների համար, քանի որ այն նկարների միջոցով սովորեցնում է պարզ գաղափարներ: Այդ շաբաթվա առաջին վարժությունում դուք կարող եք խնդրել ավագ երեխաներին օգնել կրտսեր երեխաներին դասավորել բառաշերտերը:*

Շաբաթ 4. Ես կհետևեմ Հիսուս Քրիստոսին Երկրորդ Գալուստին պատրաստվելու համար:

Նկար կարող եք գտնել sharingtime.org կայքում

Օգնեք հասկանալ *(սուրբ գրության պատմության բեմականացում).* Ասեք երեխաներին, որ հոգևոր ճշմարտությունները ուսուցանելիս Հիսուսը հաճախ սովորեցնում էր առակներով՝ օգտագործելով ծանոթ առարկաներ և իրավիճակներ: Համառոտ պատմեք տասը կույսերի պատմությունը (տես Մատթեոս ԻԵ.1-13, տես նաև "The Parable of the Ten Virgins," *Ensign,* Mar. 2009, 48–49): Բացատրեք, որ այս առակը Հիսուս Քրիստոսի Երկրորդ Գալուստը համեմատում է հարսանիքի հետ: Հրավիրեք մի քանի երեխաների բեմականացնել առակը: Իմաստուն կույսերի դերերը խաղացողներին հարցրեք, թե ինչպես էին իրենց զգում, իմանալով, որ պատրաստ էին, և քննարկեք Փրկչի կրկին գալուն պատրաստվելու կարևորությունը:

Օգնեք կիրառել *(քննարկել և նկարներ նկարել).* Գրատախտակին մի լապտեր նկարեք: Քննարկեք, թե լավ բաներ անելով Հիսուս Քրիստոսին հետևելը ինչպես է նմանվում մեր լապտերներում ձեթ լցնելուն: Թող երեխաները անվանեն մի քանի ճանապարհներ, որոնցով կարող են հետևել Հիսուս Քրիստոսին, ինչպես օրինակ՝ ծառայել ուրիշներին, տասանորդ վճարել և աղոթել: Բացատրեք, որ սրանք բաներ են, որ նրանք պետք է անձամբ ինքնուրույն անեն. ուրիշները չեն կարող այս բաները իրենց փոխարեն անել: Յուրաքանչյուր երեխայի տվեք ձեթի մեծ կաթիլի տեսքով կտրված թղթի կտոր: Խնդրեք նրանց (կամ նրանց ուսուցիչներին) գրել «Երկրորդ Գալուստին պատրաստվելու համար ես կհետևեմ Հիսուս Քրիստոսին _____» իրենց թերթիկների վրա: Խնդրեք երեխաներին լրացնել բացթողումները կամ նկարել որևէ բան, որ նրանք կարող են անել Երկրորդ Գալուստին պատրաստվելու համար: Խրախուսեք երեխաներին թերթիկները տանել իրենց տուն և կիսվել իրենց ընտանիքների հետ նրանով, ինչ նրանք սովորեցին:



Սեղմեք այստեղ լապտերի ու փոքրիկ կաթիլի համար:

Ինչպե՞ս օգտագործել երաժշտությունը Երեխաների խմբում

Երաժշտության նպատակը Երեխաների խմբում այն է, որ սովորեցնի երեխաներին Հիսուս Քրիստոսի ավետարանը և օգնի նրանց սովորել ապրել դրանով: Երեխաների խմբի երգերը սովորելը ավելի հաճելի են դարձնում, երեխաներին օգնում են սովորել և հիշել ավետարանի ճշմարտությունները և հրավիրել Հոգին:

Հետևյալ հմտությունները դուք կարող եք օգտագործել երեխաներին երգ սովորեցնելիս: Օրինակները կօգնեն ձեզ այս ծրագրում առաջարկված երգերն ուսուցանելիս: Լրացուցիչ մտքերի համար տես «Ինչպես օգտագործել երաժշտությունը Երեխաների խմբում» բաժինը 2010-ի ծրագրում:

Գրավեք երեխաների ուշադրությունը

Մինչև երգել սկսելը համոզվեք, որ երեխաների ուշադրությունը ձեզ վրա է: Նրանց ուշադրությունը գրավելու համար դուք կարող եք օգտագործել այնպիսի ցուցադրական նյութեր, ինչպիսիք են նկարները, հասարակ առարկաները կամ հենց իրենց՝ երեխաներին: Դուք կարող եք նաև պարզապես փոխել ձեր ձայնի տոնը: Ուշադրությունը կենտրոնացնող վարժությունները պետք է կարճ լինեն և ուղղակի տանեն դեպի երգը: Օրինակ.

- Մինչև «Ուզում եմ տեսնել Տաճարը» (*CS*, 95) երգելը խնդրեք երեխաներին բարձրացնել իրենց ձեռքերը, եթե նրանք տաճար տեսել են: Հրավիրեք նրանց մտածել այն մասին ,թե ինչպես են իրենց զգում, երբ երգելիս տաճար են տեսնում:
- Երեխաները կարող են լինել ձեր ամենալավ ցուցադրական նյութը: “Մենք կբերենք Նրա ճշմարտությունը աշխարհին” (*CS*, 172–73) երգելիս, երբ նրանք ներկայացնում են միսիոներներին, հրավիրեք նրանց օգտագործել հասարակ դեկորացիաներ, ինչպես օրինակ փողկապներ կամ սուրբ գրություններ:

Տանը **պարապեք**, *որպեսզի երեխաներին սովորեցնելիս կարողանաք նայել նրանց, ոչ թե գրքին:*

Ցուցադրական նյութերը թող հասարակ լինեն: Սա երեխաներին թույլ է տալիս կենտրոնանալ երգի ուղերձի վրա, և թույլ է տալիս Հոգուն վկայել, որ այն, ինչ իրենք երգում են, ճշմարիտ է:

Սևեռեք երեխաների լսողությունը

Երբ դուք երեխաներին խնդրում եք լսել հարցի պատասխանը, դա օգնում է նրանց սովորել երգի բառերը և ուղերձը: Դուք կարող եք նրանց խնդրել լսել այնպիսի հարցերի պատասխանները, ինչպիսիք են՝ «ո՞վ», «ի՞նչ», «որտե՞ղ», «ե՞րբ», կամ «ինչու՞»: Դուք կարող եք նաև խնդրել երեխաներին լսել կարևոր բառերը կամ նույնահանգ բառերը, կամ իրենց մատների վրա հաշվել, թե քանի անգամ են նրանք երգում որոշ բառեր:

Մինչ դուք սովորեցնում եք «Երբ սրտով եմ լսում» (էջ 28 այս ծրագրում) երգը, գրատախտակին գրեք հետևյալ հարցերից մեկը. «Որտե՞ղ ես կարող եմ լսել Փրկչի ձայնը»: «Ո՞վ է մեզ սովորեցնում արդար ապրել»: «Ո՞վ է խոսում մեզ հետ ցածր ձայնով»: Հրավիրեք երեխաներին լսել պատասխանները՝ մինչ նրանք երգում են, և ազդանշան տալ (ձեռքերը ծալելով,կանգնելով կամ ականջներին ձեռք տալով), երբ նրանք երգում են պատասխանը: Թող երեխաները ձեզ հետ միասին երգեն պատասխանները մի քանի անգամ: Մեկ այլ հարց գրեք գրատախտակին և կրկնեք:

Երեխաները կզգան ավետարանի հանդեպ ձեր սերն ու խանդավառությունը՝ մինչ դուք երգում եք միասին: Երբ դուք կիսվեք Փրկչի մասին ձեր վկայությամբ, նրանք նույնպես հնարավորություն կունենան զգալ Նրա սերը իրենց հանդեպ:

Պատրաստվեք *սովորեցնել երգի ավետարանի ուղերձը, սովորելով* Մանկական Երգարանում *տրված սուրբ գրությունների հղումները:*

Ներգրավեք երեխաներին

Երգելիս բազում ձևերով ներգրավեք երեխաներին: Օրինակ.

- Հրավիրեք երեխաներին մտածել հասարակ ձեռքի շարժումներ, որոնք կօգնեն նրանց հիշել երգի բառերն ու ուղերձը (տես «Օգնություն երաժշտության ղեկավարներին» էջ 7)
- Հրավիրեք երեխաներին պատկերացնել, որ իրենք միսիոներներ են՝ մինչ նրանք երգում են «Մենք բերում ենք աշխարհին Նրա ճշմարտությունը»: Խնդրեք նրանց տեղում կամ սենյակով մեկ վստահ քայլել և բռնել իրենց սուրբ գրությունները՝ մինչ նրանք երգում են:
- Մինչև «Երբ սրտով եմ լսում» երգը երգելը յուրաքանչյուր երեխայի տվեք մի թղթե սրտիկ և խնդրեք նրանց մի կողմի վրա գրել «լսել» և մյուս կողմի վրա՝ «ունկնդրել»: Բացատրեք, որ այս բառերը երգում հաճախ են կրկնվում: Խնդրեք երեխաներին ցույց տալ սրտիկի ճիշտ կողմը, երբ երգում են այդ բառը:

Սեղմեք այստեղ սրտիկների համար:

Նոր երգեր. *Երբ դուք երեխաներին նոր երգ եք ներկայացնում, առաջինը դուք այն երգեք նրանց համար: Երեխաները հեշտությամբ են սովորում երգը, երբ մինչև երգելը նի քանի անգամ լսում են այն:*

Երգել, Երգել, Երգել

Երեխաները լավագույնս սովորում են երգերը, երբ լսում ու երգում են դրանք նորից ու նորից:

Վերանայեք ու երգեք երգերը բազում զվարճալի ճանապարհներով: Օրինակ.

- Հրավիրեք երեխաներին սկսել սովորել նոր երգի մեղեդին նախերգանքի ժամանակ այն լսելով կամ կիսաձայն երգելով:
- «Ես կհետևեմ Աստծո ծրագրին» (*CS*, 164–65) վերանայելու համար պատրաստեք մի քանի ճանապարհային նշաններ: Յուրաքանչյուր ճանապարհային նշանի վրա գրեք երգից տարբեր բառեր: Բարձրացրեք նշանը և ասեք երեխաներին, որ երգը երգելիս նրանք չպետք է երգեն այդ բառը: Կրկնեք մյուս ճանապարհային նշաններով:
- Թղթից կամ ստվարաթղթից պատրաստեք մի խորանարդ և խորանարդի յուրաքանչյուր կողմում գրեք երգելու տարբեր ձևեր (օրինակ՝ ծափ տվեք մեղեդին, ձեռքի վարժություններ արեք, ցածր երգեք, երգում են տղաները, երգում են աղջիկները կամ կիսաձայն երգեք մեղեդին): Մեկ այլ խորանարդի վրա գրեք Երեխաների խմբի որոշ երգերի անուններ, որոնք երեխաները սովորում են: Հրավիրեք երեխաներից մեկին գլորել առաջին խորանարդը , որ որոշեն, թե ինչպես են երգելու, և հրավիրեք մեկ ուրիշ երեխայի գլորել մյուս խորանարդը, որ որոշեն, թե որ երգն են երգելու:

Սեղմեք այստեղ խորանարդի նմուշների համար:

Եթե սրտով եմ լսում

Հանգիստ ♩ = 88–104

Խոսք և երաժշտություն՝ Սալի Դեֆորդ

1. Ե-թե

Հի - սու - սի ժա - մա-նակ փոք-րիկ մա-նուկ լի - նե - ի, Նը - րա հետ կը - քայ-
սում եմ ապ - րող մար-գա - ռե - ին՝ կար-ծես Քրիս-տո - սին, Նա նույ-նը կա-սեր,
զգում եմ Սուրբ Հո - գին, երբ նա ու - սու - ցա-նում է ինձ, Նա ինձ սփո-փում է

լե - ի և Նը - րան միշտ կը - լը - սեի, Բայց երբ սուրբ գրը-քերն եմ կար-դում, Նը -
ե - թե կող-քիս լի - ներ այս պահ - ին, Մար - գա - ռեն ար - դար, խա-ղաղ ապ - րել
և վը-կա-յում Քրիս-տո-սի մա - սին, Խո - սում է մեղմ և խա - ղա - ղու-թյամբ

1. 2.

րա խոսքն եմ լը - սում,
է սո - վո-ռեց-նում, Եվ ե - թե սրը-տով եմ լը-սում, Փրրկ-չի ձայնն է հրն - չում:
է հո - գիս լրց - նում,

3.

rit.

2. Լը - Փրրկ - չի ձայնն է հրն - չում:
3. Ես

Copyright © 2007 by Sally DeFord. Բոլոր իրավունքները պաշտպանված են:
Այս երգը կարող է բազմացվել միայն առանձին դեպքերում ոչ առևտրային
նպատակներով եկեղեցում կամ տանն օգտագործելու համար:
Այս ծանուցումը պետք է ներառվի յուրաքանչյուր օրինակի մեջ:

Հաշմանդամ երեխաների ուսուցում

Փրկիչը սովորեցրել է. «Բոլոր քո զավակները պիտի ուսուցանվեն Տիրոջ կողմից. և մեծ պիտի լինի քո զավակների խաղաղությունը» (3 Նեփի 22.13):

Երեխաների խմբի ղեկավարները կարևոր պարտականություն ունեն սովորեցնելու Հիսուս Քրիստոսի ավետարանը բոլոր երեխաներին, ներառյալ նրանց, ովքեր հաշմանդամ են: Երեխաների խումբը մի վայր է, որտեղ յուրաքանչյուր երեխա պետք է ողջունվի, սիրվի, կրթվի ու ներգրավվի: Նման մթնոլորտում բոլոր երեխաների համար ավելի հեշտ է հասկանալ մեր Երկնային Հոր ու Հիսուս Քրիստոսի սերը, և զգալ ու ճանաչել Սուրբ Հոգու ազդեցությունը:

Յուրաքանչյուր երեխա թանկ է Աստծո համար: Յուրաքանչյուր ունի սիրո, հարգանքի ու աջակցության կարիք:

Նկար կարող եք գտնել sharingtime.lds.org կայքում

Խորհրդակցեք ուրիշների հետ, երբ դուք աշխատում եք հոգալ ձեր Երեխաների խմբի հաշմանդամ երեխաների կարիքներին:

1. **Խորհրդակցեք երեխայի ծնողների հետ:** Ծնողները սովորաբար ավելի լավ գիտեն իրենց երեխային, քան ուրիշները: Նրանք կարող են ձեզ սովորեցնել, թե ինչպես ընդառաջ գնալ նրա կարիքներին, գրավել ուշադրությունը և կծանոթացնեն սովորելու սիրած ձևերին: Օրինակ, որոշ երեխաներ հատկապես լավ են արձագանքում երաժշտությանը, մյուսները՝ պատմություններին, նկարներին, սուրբ գրություններին կամ շարժումներին: Օգտագործեք ուսուցման բազմազան մեթոդներ, համոզվելով, որ ներգրավված են ճանապարհները, երբ յուրաքանչյուր երեխա սովորում է լավագույն ձևով:

2. **Խորհրդակցեք Երեխաների խմբի մյուս ղեկավարների ու ուսուցիչների հետ:** Աղոթեք և միասին աշխատեք, որ գտնեք ճանապարհներ, թե ինչպես օգնեք յուրաքանչյուր երեխայի սովորել Հիսուս Քրիստոսի ավետարանը և սիրված զգալ:

3. **Խորհրդակցեք ճյուղի խորհրդատուի հետ:** Քահանայությունը և այլ օժանդակների ղեկավարներ կարող է մտքեր ունենան հատուկ կարիքներ ունեցող երեխաներին օգնելու համար: Մի ծխում, քահանայապետերի խումբը առաջարկել է «Երեխաների խմբին պապիկ» տալ ամեն շաբաթ, որը կնստի երիտասարդ տղայի հետ, որը աուտիզմ ունի: (Լավ կլինի, որ ամեն շաբաթ լինի նույն մարդը): Սա կօգնի տղային կենտրոնանալ դասի վրա և սիրված զգալ:

Երեց Մ. Ռասել Բալարդը սովորեցրել է. «Ակնհայտ է, որ մեզնից նրանց, ում վստահված են թանկարժեք երեխաներ, տրվել է սուրբ, վեհանձն պատասխանատվություն, որովհետև մեզ է, որ Աստված ընտրել է, որ այսօրվա երեխաներին շրջապատենք սիրով և հավատի կրակով, և հասկացողությամբ, թե իրենք ովքեր են» (“Great Shall Be the Peace of Thy Children,” *Ensign,* Apr. 1994, 60):

Սեղմեք այստեղ կերպարանքների համար:

Լրացուցիչ տեղեկությունների համար, *թե ինչպես օգնել հատուկ կարիքներ ունեցող երեխաներին տես lds.org/pa (սեղմեք* **Primary,** *այնուհետև* **Teaching All Children, Including Those with Disabilities***),* Teaching, No Greater Call, *38–39, և disabilities.lds.org.*

Որոշ հաշմանդամ երեխաներ լավ են արձագանքում ցուցադրական հուշումներին: Օգտագործեք այնպիսի ազդանշաններ, ինչպիսին են այստեղ ցուցադրվածները, որոնք ցույց են տալիս, թե երբ է աղոթելու ժամը, լռելու կամ երգելու ժամը:

Հարմարեցվող դասեր. *Դուք միգուցե կարիք ունենաք հարմարեցնել ձեր միացյալ ժամը հաշմանդամ երեխաների համար: Տես sharingtime.lds.org որոշ օրինակների համար:*

ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ

ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԻ ՍՐԲԵՐԻ ԵԿԵՂԵՑԻ

Հրատարակվել է Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու կողմից

© 2010 by Intellectual Reserve, Inc. Բոլոր իրավունքները պաշտպանված են: Տպագրված է ԱՄՆ-ում: Անգլերենի հաստատումը. 3/09:
Թարգմանության հաստատումը. 3/09: *2011 Outline for Sharing Time: I Know the Scriptures Are True*-ի թարգմանությունը: Armenian. 08635 201

Նկարների ցանկ. էջ 9. *Քրիստոսը Գեթսեմանիում,* հեղինակ՝ Հարրի Անդերսոն, © IRI. *Խաչելությունը,* հեղինակ՝ Հարրի Անդերսոն, © IRI. *Տեսեք Իմ Ձեռքերը և Ոտքերը,* հեղինակ՝ Հարրի Անդերսոն, © IRI: էջ 10. *Ջոզեֆ Սմիթը Իմաստություն է Փնտրում Աստվածաշնչից,* հեղինակ՝ Դեյլ Քիլբորն, © 1975 IRI. *Առաջին Տեսիլքը,* հեղինակ՝ Գարի Քափ. © 2009 Գարի Լ. Քափ. *Մորոնի Հրեշտակը Հայտնվում է Ջոզեֆ Սմիթին,* հեղինակ՝ Թոմ Լովել, © 2003 IRI. *Ջոզեֆ Սմիթը Թարգմանում է Մորմոնի Գիրքը,* հեղինակ՝ Դել Փարսոն, © 1996 IRI. *Միարոնյան Քահանայության Վերականգնումը,* հեղինակ Դել Փարսոն, © 1984 IRI: էջ 11. *Քրիստոսը Ձեռնադրում է Առաքյալներին,* հեղինակ՝ Հարրի Անդերսոն, © IRI: էջ 16. *Սան Դիեգո Կալիֆորնիա Տաճար,* © 1997 Սթիվ Թրեգեագլ: էջ 17. *Քրիստոսը երեխաների հետ,* հեղինակ՝Հարրի Անդերսոն, © IRI: էջ 25. *Նրանցից Հինգը Իմաստուն էին,* հեղինակ՝ Կալթեր Ռեյն, պատկանում է Եկեղեցու Պատմության Թանգարանին: էջ 27. *Երեխաների Երգարանի* կազմը, հեղինակ՝ Ֆյուլիս Լաչ, © 1988 IRI: Հետևի կազմը. *Ջոզեֆ Սմիթը Իմաստություն է Փնտրում Աստվածաշնչից,* հեղինակ՝ Դեյլ Քիլբորն, © 1975 IRI:

ARMENIAN
4 02086 35201 9
08635 201